1895 ՓԵՏՐՎԱՐ 15 (72) ՀՈՐԵՔՀԱՐԹԻ

18—ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№ 18

1895 ՓԵՏՐՎԱՐ 15 (27) ՀՈՐԵՔՀԱՐԹԻ

ԱՐԶԱԳԱՆՔ

Հրատարակվում է յուրաքանչյուր երեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը։

Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի, 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։ Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և Կենդրոնական գրախանութում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ“. կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang.“

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

„ԱՐԶԱԳԱՆՔ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելիամինովսկի փողոց, № 22, տուն խանդալամեանի) և «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ։

Ցտարաքաղաքացիք պէտք է դիմեն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ“. իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «Ardzagang»։

Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն և օտար լեզուներով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Արձագանքի» հեռագիր։
Անգլիական պարլամէնտ։
Լուրեր Տաճկաստանից։
Սիրիայի քրիստոնեաները։
Դեսպանների միջամտութիւնը։
Քննիչ կոմիսիան։
Կօրանի դէպքը։
Խարզանի հայերը։
Նոր միտինգ։
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— Լօնդօնից։ Կ. Պոլսից։ Հռովմից։ Տրապիզօնից։ Լուրեր Կ. Պոլսի թերթերից Վեհ. Հայրապետի առողջութիւնը քննող օտարազգի բժիշկներ։ Պետերբուրգից։ Ռուսիաբնակ տաճկահպատակները և պարսկահպատակները։ Կարսի երկաթուղու շինութեան սկզբնաւորութիւնը։ Մետեխի հայոց եկեղեցին։ Հանդէս Ս. Նունէի օրիորդաց դպրոցում։ Նամակ Բագուից։ Լոռուց Ախալքալաքից։ Երևանից։ Տարեկան հաշուետուութիւն Ներս. դպրոցում։ Կ. Պոլսի ամենապատիւ Պատրիարքի մի գրութիւն։ Միացեալ պարահանդէսը։ Փոթորիկ Թիֆլիզում։ Կովկ. Կայսեր. Բժշկ. Ընկեր. նիստը։ Ազատուեցէք նախապաշարմունքներից։
ՊՈՐՍԿԱՍՏԱՆ.—Հայկական թատրոն Սալմաստում։
ՖԷԼԻԷՏՕՆ.—Ս. Սարգսի տօնը Մշոյ հայերի և քիւրդերի մէջ։
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՋԱՆԱԶԱՆ
ՑԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՑՈՒՑԱՏՈՒՐԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒԹԻՒՆՆԵՐ

«ԱՐՁԱԳԱՆՔ»-Ի ՀԵՌԱԳԻՐ

(Յատուկ թղթակցից)

ԲԹՈՒՄ, փետր. 14-ին, 12 ժ. 52 րոպէ.

Այսօր կէսօրին Նորին Վեհափառութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Կոստանդին» շոգենաւով ուղևորուեց Նովօրօսիսկ։ Ճշգանակը, որ առաւօտուանից անձրևային էր կարկտախառն և ձիւնախառն՝ շոգենաւը մեկնելու պահուն պարզուեցաւ։ Վեհափառը բոլորովին առողջ է։ Ժողովրդի ահագին բազմութիւն լցրել էր նաւահանգիստը Նորին Օծութեան բարիերթ մաղթելու. անվերջ «վեցցէ»-ները թնդացնում էին օդը։

Թեմական առաջնորդը այսօր երկաթուղու դիշերուայ գնացքով վերադառնում է Թիֆլիզ։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԷՆՏ

«The Daily News»-ի փետրվարի 8 համարում կարդում ենք, թէ Համայնքների Պալատի ամսոյս 7 նիստում հետևեալ հարց ու պատասխաններն են տեղի գտել հայկական խնդրի հետ կապ ունեցող հանգամանքների մասին։

Նախարարի օգնական սեօր Է. Դրէյը պատասխանելով միստր Ջոէնին, ասաց. Վեհափառ Թագուհու կառավարութիւնը լուր ունի ստացած, թէ Մարաշի կամ Ֆէրմուզի արքեպիսկոպոսը մեղադրուած է եղել ապստամբներին պատսպարելուն համար. իսկ Զէյթունի արքեպիսկոպոսը նրա համար, որ նախագահել է մի յեղափոխական մասնաժողովի մէջ, ամրացրել է մի վանք, պաշարել է Զէյթունի բանտը և օգնել կալանաւորներից երկուսին փախչելու։ Մուշի եպիսկոպոսն ամբաստանուած է հայ ժողովրդին ապստամբութեան հրաւէր կարդալուն համար։ Արաբկիրի եպիսկոպոսի մասին զեկուցուած է, թէ նա յեղափոխական կուսակցութեան գործունեայ անդամներից մէկն է եղել. նրան տեղափոխում են Դիարբէքիր, ուր նա վերստին զբաղում է ժողովրդին, և այս պատճառով աքսորվում է Երուսաղէմ։ Գալով այն հարցին, թէ ինչ միջոցներ են գործ դրուած այս կալանաւորներին արձակելու համար, ես ոչինչ չունիմ աւելացնելու իմ այն պատասխանի վրայ, որ տուել եմ մեծարգոյ անդամին անցեալ ապրիլի 18-ին և յուլիսի 31-ին։ Դէպքերն արժանապէս ուշադրութեան են առնուած և ինչ որ պէտք էր և կարելի էր անել մինչև այժմ, արդէն արել է Վեհափառ Թագուհու դեսպանատունը։

Միստր Ջոէնն հարցնում է նախարարի օգնականին, թէ արդեօք նա մտադիր է,—ի նկատ առնելով տաճկաբնակ քրիստոնեաների հալածանաց աշխարհագոյժ լուրերը,—դընել պարլամէնտի սեղանի վրայ Վեհափառ Թագուհու Ասիական Թիւրքիայում կարդած հիւպատոսների անցեալ զեկուցումները, որոնք վերաբերվում են հայ ժողովրդի վիճակին և հաղորդուած են արտաքին գործերի նախարարութեան՝ սկսած 1890 թուականի յունիս ամսից մինչև 1894 թ. սեպտեմբերը, և մինչև այս օրս չեն ներկայացուած պարլամենտին։

Սեօր Է. Դրէյը—Նորին Վեհափառութեան կառավարութիւնը մինչև այժմ չէ ներկայացրել այդ թղթերը, կարծելով թէ դրանց հրատարակումը ոչ հայերին նպաստաւոր կը լինի, ոչ էլ կը դիւրացնէ եւրոպական պետութեանց միաբանագործակցութիւնը, որ այնքան փափագելի է և կարևոր մի լաւ արդիւնք ձեռք բերելու համար։ Այս իսկ պատճառով ես անկարող եմ ներկայ հանգամանքներում որևէ խոստումն անել, թէ յիշեալ թղթերը սեղանի վրայ կը դրուին։

Միստր Ջոէնն հարցնում է.—Մինթէ թղթերն այնպիսի ահարկու են, որ կարելի չէ հրատարակել։

Սեօր Է. Դրէյը.—Ոչ, սեօր։ Կարող եմ համարձակ ասել մեծարգոյ չէնտլմէնին, թէ մինչև այս րոպէս ստացուած զեկուցումները Սասունի դէպքերի մասին շատ աւելի ծանրակշիռ ու վտանգաւոր են (very much more grave and serious), քան ինչ որ բովանդակում են բոլոր նախորդ գրութիւնները։

Միստր Փ. Ս. Ստիվնսը հարցնում է, թէ արդեօք իւր մեծարգոյ բարեկամը կարող է անպայման հերքել այն լուրը, թէ Բ. Դուռը խոստմունք է առած Բրիտանիայի կառավարութիւնից, թէ ներկայ խնդրին վերաբերեալ ոչ մի պարլամէնտական թուղթ չպիտի հրապարակ հանուի առ այժմ, և թէ կարող է արդեօք հաստատել, որ Բրիտանական կառավարութիւնը ոչ մի կերպով չէ կապած իւր ձեռքերն այս նիւթի նկատմամբ։

Սեօր Է. Դրէյը.—Ոչ, սեօր։ Այդ լուրն անհիմն է, և այդպիսի խոստմունք չէ տրուած։ (Հաճոյանքներ նախորդներից)։

Միստր Ջ. Էլլիս հարցնում է, թէ արդեօք իրաւ է, որ երբ երկու անգլիական լրագիրների թղթակիցները, որոնք նորերս մտադիր էին Կ. Պոլիս գնալ հայկական խնդրի մասին դիտելիքներ հաւաքելու համար և ունէին լորդ Կիմբերլէից առնուած անցագրեր, այդ անցագրերը պաշտօնապէս մակագրել տալու համար դիմում են Թիւրքաց դեսպանին, Բուլուոէմ փաշան յայտնում է նրանց, թէ մակագրիչն Օսմանեան գլխաւոր հիւպատոսը կը տայ, և չնայելով այդպիսի խոստման՝ թղթակիցները չեն կարողանում ստանալ անհրաժեշտ վաւերացումը։

Սեօր Է. Դրէյը պատասխան է տալիս, թէ իրեն յայտնի չէ, որ այդպիսի բան պատահած լինէր անգլիական թղթակիցների։ Սակայն իրաւ է, որ մի այդպիսի անցք տեղի է ունեցել ուրիշ երկու անգլիացի չէնտլմէնների անցագրի գործում, բայց նրանք գանգատ չեն յայտնել և այդ մասին որ է խնդիր չէ ծագել։

Միստր Փ. Ստիվնսը հարցնում է, թէ այդ դեպքում անգլիական և կամ ուրիշ թղթակիցների դէմ դրուած արգելքը արգելում էր մինչև Սասունի նոր հանգն այցելել, թէ վերաբերվում էր և մինա հայկական նահանգներին։

Սեօր Է. Դրէյն ասում է, թէ ձեռնհաս չէ՝ առանց տեղեկութիւն ստանալու՝ ճշդել հաղորդել այդ արգելքի հանգ ամանքները, բայց մի այդպիսի արգելք իրօք եղել է։

ԼՈՒՐ ԵՐ ՏԱՃԿԱՍՏԱՆԻՑ

(«The Daily News», փետր. 11)

Բէյտերի դորձ. հեռ. Կ. Պոլիս, փետր. 7.

Թագուհու ճառի ակնարկութիւնը հայոց խնդրի վրայ Պարլամէնտի բացման միջոցին և լորդ Ռոսբէրիի ատենաբանութիւնը Հայաստանում մտցուելիք ռէֆորմների անհրաժեշտութեան վրայ, խոր տպաւորութիւն են գործել պալատի մէջ։ Տեղական լրագրերին արգելուած է բան գրել այդ մասին, և թուղթերի ճառը մի քանի մասամբ է հրատարակուած։

Ս յ տեղի դիւանագիտական շրջաններում հաւատացած են, որ իրօք անհրաժեշտ կըլինի Բեռլինի դաշնագրութիւնն ստորագրող պետութիւններին մի կոնֆերանս գումարել՝ Հայաստանում մտցուելիք ռէֆորմները քննելու համար։

«The Times»-ի յունվար 31 համարի օրինակները, որոնց մէջ մի առաջնորդող յոդուածաւ կար Բ. Դուռն կարդադրութեան մասին, որով արգելվում էր օտարազգի թղթակիցներին մուտք գործել Փոքր Ասիա (տես «Արձագանք», № 10), թէպէտ և հասան Պոլիս, բայց կառավարութիւնը թոյլ չտուաւ ցրուել նրանց։

Մեր թղթակցից, Մարսէյլ, փետր. 9.

Կ. Պոլսից հաւաստում են, թէ Բ. Դուռը վերջապէս ստիպուել է մեղմացնել Եւրոպացի թղթակիցներին Հայաստանի մուտքն արգելող օրէնքը։ Նրանց վրայ սակայն պարտք է դրվում՝ ճամբորդելիս ուղեկից ժանդարմներ վերցնել։ Սիներ Քսեմէնէսի նախագիծը՝ մի Անգլօ-Թրքական ընկերութիւն կազմելու Լօնդօնում՝ սիրով ընդունուել է Իլդիզ Քիօսկի շրջանում. ասում են, թէ ընկերութեան առաջին քարտուղարը Վուդ փաշան կըլինի։ Դրամական միջոցները Օսմանեան գանձարանից կըտրուին։

Բէյտ. գործ. հեռ. Կ. Պոլիս, փետր. 9.

Բ. Դուռը պաշտօնապէս հերքում է այն լուրը, թէ արդարադատութեան նախարարը շրջաբերական է գրել հայկական գործերը դատող ատեաններին՝ նրանց վրայ ազդելու մտքով։ Երզրումի նոր շարժման և Սիրիայի քրիստոնեաների հալածման ընդհանուր տարածուած լուրերը նմանապէս հերքվում են Բ. Դռան կողմից։ Պաշտօնական թերթերն ուզում են հաւատացնել, թէ ամեն բան խաղաղ է և կարգին։

—

«The Daily News»-ի նոյն համարում կարդում ենք հետևեալը. «Մենք ստացանք Անգլօ-Հայկական Ընկերութիւնից մի գիր, որով նա յիշեցնում է հասարակութեան, թէ թիւրք կօմմիսիայի ըստ բաղմանց առարկան, իրեն տրուած հրահանգներին նայելով, պիտի լինի միայն քննել Բիթլիսի վիլայէթում կատարուած «աւազակութեան դէպքերը»։ Այդ կօմմիսիան շօշափելու չէ Կիլիկիայի, Բերբերիայի, Ռոդոսի, Ալէպպօի և Սիրիայի բանտերում տառապող քաղաքական կալանաւորների խնդիրը։ Սեօր Էդուարդ Գրէյի հրաժարուիլն այդ նիւթի նկատմամբ բացատրութիւն տալուց ոչ ոքի չէ կարող գոհացնել և դարձեալ պարլամէնտի ուշադրութեան կ'առաջարկուի։ Ընկերութիւնը ցաւում է, որ Վեհափառ Թագուհու կառավարութիւնը, զլանալով բացատրութիւն տալ պարլամէնտին, առ ոչինչ է համարում անպարտ մարդկանց կեանքը. մինչդեռ եթէ նա Մարաշի, Զէյթունի, Մուշի և Արաբկիրի առաջնորդների դէմ եղած սուտ ամբաստանութիւնները հրատարակէր և միջազգային հիւպատոսական քննութեան նիւթանէր, թէ նրանց և թէ միւս բանտարկուածների անմեղութիւնը իսկոյն և եթէ կ'երևնար։ Այս պատճառով Անգլօ-Հայկական Ընկերութիւնը պարտք է դրել իւր անդամների վրայ՝ անպատճառ մաքառել ռէֆորմների թաքուցման դէմ։

—

Սոսկպօրտից մեզ դրում են.—Այստեղ հասարակաց կարծիքն օր ըստ օրէ հետաքրքրվում է հայերի կրած ճնշումներով։ Ամսոյս 12-ին գերապ. Ա. Սիմոնի նախաձեռնութեամբ և լորդ Մայօրի գահերէցութեամբ մի քաղաքային միտինգ կը գումարուի, և պարլ. անդամ միստր Շուէէնը կը բացատրէ տաճկաբնակ հայերի վիճակը և անհրաժեշտութիւնը՝ լոյս սփռելու թիւրք պաշտօնեաների ընթացքի վրայ, որով նրանք հալածում են քրիստոնեայ հայերին։ Այդ միտինգում կ'որոշուի առաջարկել կառավարութեան, որպէս զի նա Բեռլինի դաշնագիրն ստորագրող միւս պետութեանց հետ միասին փութայ ռէֆորմներ մտցնել Հայաստանում և շուտով արձակել տայ քաղաքական կոչուած կալանաւորներին։

—

Նամակ «The Daily News»-ի խմբագրին.

Սեօր,—Իմ ուշադրութիւնը գրաւեց Ձեր լրագրի փետրուարի 4 համարում հրատարակուած Բէյտերի թղթակցի նամակը Հայաստանի մասին, ուր պարզ նը կարագրուած են թիւրքերի արած գործերն այդ երկրում. Սակայն հեղինակը բարկացած է երևում թէ հայ ապստամբների և թէ թիւրքերի դէմ, և մի քանի բաներ է պատմում առաջինների մասին, որ չէ կարելի չհերքել։ Թղթակիցը պնդում է թէ թիւրքերի անգթութիւնները արդարանում են մասամբ իւրաքանչիւր հայ ապստամբների ընթացքով, և այդ բանը լուսաբանելու համար յառաջ է բերում հետևեալ պատմութիւնը. «Ես հաւատի եմ, ասում է նա, թէ հայ դաւադիրներից ոմանք մտադիր էին սպանել գերապ. Էդուարդ Բիգգսին և նրա հետ Մարսովանի միւս երկու հայ միսիոնէրներին և յանցանքը ձգել թիւրքերի վրայ, որի փոխարէն, ինչպէս կարծում էին, Միացեալ Նահանգներն ստիպուած կը լինին հատուցումն պահանջել թիւրքական կառավարութիւնից և հնարաւոր կ'անեն հայաստանի անկախութիւնը։ Միսիոնէրները կարողացան փրկուիլ վտանգից միայն մի հայ բարեկամի շուտափոյթ ազդարարմամբ։» Այս անհեթեթ առասպելին առիթ տուող իրական դէպքի հանգամանքները մենք անձամբ լսած ենք Զաքարեանից (Լևոն Բարսեղեան), որ գործին մասնակից էր։ Գործի էութիւնը հետևեալն է։ 1893 թ. ամրան Զաքարեանը հալածուելով թիւրք ոստիկաններից, ապաստան է գտնում կօլէէջի յարկի տակ մի աշակերտի մօտ, որ իւր բարեկամն էր։ Դժբախտաբար այդ իսկ միջոցին գերապ. Էդուարդ Բիգգսը մտնում է աշակերտի սենեակը և հարցնում անծանօթ հիւրին, թէ ով է նա։ Գերապ. հայրն իմանալով, թէ եկաւորն ապստամբներից մէկն է, ասում է նրան աշակերտների ներկայութեամբ, թէ ոստիկանութեան կը մատնէ նրան։ Առ այդ Զաքարեանը պատասխան է տալիս. «Կեանք կեանքի փոխարէն։ Եթէ դուք ինձ մատնէք, ընկերներս ձեզ կը սպանեն։» Գեր. Էդ. Բիգգսը հրաժարվում է իւր որոշումից և չէ մատնում Զաքարեանին. սա թողնում է կօլէէջը, և մի քանի շաբաթից յետոյ թիւրք զինուորները սպանում են նրան մի ուրիշ տեղ։

Այս է բուն եղելութիւնը։ Հայերը ոչ մի ժամանակ չեն նեղել ոչ գերապ. Բիգգսին, ոչ էլ նրա երկու ընկերներին, որոնց անունները չեն յիշատակուած թղթակցութեան մէջ։ Այս զրպարտութիւնից զատ Բէյտերի թղթակիցը յառաջ է բերում և ուրիշ մեղադրանքներ—իբր թէ ապստամբները դիտութեամբ մարդ են սպանում և սպանել տալիս և յանցանքը թիւրքերի վրայ ձգում։ Այդ բոլորը դատարկ բարբաջանք է։ Իբր թէ նրանք մահ սպառնալով փող են կորզում, թշնամիներին խոշտանգում են, լկում են։ Այդ տեսակ վեր ի վերոյ և մի առ մի չընշանակուած մեղադրանքներին անհնարին է պատասխանել։ Թող Բէյտերի գործակալութեան մէջ այդպիսի կեղտեր ածող չէնտլմէնը յանկէ անուանէ յիշատակէ գործող անձանց և դէպքերի տեղն ու ամսաթիւը, ինչպէս որ անում է միսիոնէրների պատմութեան մէջ, — և այն ժամանակ կը տեսնենք, թէ արդեօք նրա մեղադրանքներից գէթ մէկը կը դիմանայ քննութեան։

—

ՍԻՐԻԱՅԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ

(«The Daily News» փետր. 13.)

Հեռագիր Վարնայից, փետրվ. 12.

Սիրիայից հասած նորագոյն լուրերը հաստատում են, որ մի քանի վտանգուած գաւառների քրիստոնեաները ծածուկ պատրաստուել են քաջօրէն դիմադրելու, եթէ մահմեդականները կամ դրուզները յարձակուելու լինին։ Թիւրք զինուորները մի քանի անգամ քաղաքի փողոցներում անցորդների վրայ ընկան և կողոպտեցին, սակայն յանցաւորները որ և է պատիժ չստացան։ Անցեալ շաբաթ Մաթալլահի սպառազէն դրուզներից մի ստուար խումբ, Հասբէյահ գնալիս ներս խուժեց Եդայդահ և փողոցներով անցնելու միջոցին սկսաւ հրացան պարպել ու պատերազմական երգեր երգել, մահ սպառնալով քրիստոնեաներին, որոնք և սարսափահար փախան դէպի իրենց տներն ու դռոցուեցան։ Դրուզները Հասբէյահ հասնելուց յետոյ պաշարեցին Ղէհաբ Էմիրի պաշտօնական ընակավայրը։ Այդ Էմիրը Լիբանանու առաջաւոր քրիստոնեայ տոհմից է և նահանգի փոխ-կառավարիչը։ Մի քանի շրջաբնակ դրուզ շէյխեր ժամանակին վրայ հասնելով, հանգստացրին սրիկաներին և արիւնհեղութեան առաջն առան։

ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆԸ

Մեր թղթակցից, Կ. Պոլիս, փետրվ. 12.

Մեծ պետութեանց դեսպանները միասին հաւաքուելով խորհրդակցութիւն ունեցան Պերայի և Ստամբուլի փողոցներում այժմ տիրող անվստահելի դրութեան մասին։ Վճռեցին իրենց թարգմանների միջնորդութեամբ իմացնել Բ. Դռան, թէ օտարազգի բնակիչները մեծ տագնապի մէջ են, որովհետև նորերս փողոցներում բազմաթիւ սպանութիւններ և աւազակային յարձակումներ են պատահել, զինուորները կոպտութեան օրինակ են հանդիսացել՝ մանաւանդ կանանց վերաբերմամբ, և բնակիչների վրայ յարձակուել։ Այս բոլորը յայտնելով հանդերձ՝ դեսպանները պահանջում են, որ Բ. Դուռն աւելի ազդու միջոցներ գործ դնէ կեանքի և գոյքի ապահովութեան համար։

Որ ըստ օրէ աւելի դանդատներ են լսվում մանաւանդ թիւրք զինուորների դէմ, որոնք հրապարակաւ հրում և վիրաւորում են տիկնանց։ Վերջին երկու երեք շաբաթների ընթացքում փողոցները գրեթէ դատարկ են։ Լուր կայ թէ զինուորները խնդրամատոյց են եղել իշխանութեան, որ իրենց զէնք տրուի, բայց թէ այդ խնդիրը մերժուել է։

ՔՆՆԻՉ ԿՕՄԻՍԻՈՆ

Մեր թղթակցից, Կ. Պոլիս, փետր. 12.

Քննիչ կոմիսիան մինչև ամսոյս 10 ունեցել է տասնևերկու նիստ։ Գրեթէ բոլոր կանչուած վկաները թիւրքերին նպաստաւոր ցուցմունք են արել. սակայն մի քանի հայեր հաստատ վճռել են յառաջ մատնչիլ և իրենց վկայութիւնները ներկայացնել Սասունի դէպքերի մասին։

ԿՕՐԱՆԻ ԴԷՊՔԸ

Բէյտերի գործ. հեռ. Կ. Պոլիս, փետր. 10.

Նորերս մի փառահեղ կազմով Կորան է գտնուել Ամասիայի (Սիվասի վիլայէթ) մի կոյանոցում։ Որտ մի Հարիւր և քառասուն հայ կասկածի ենթարկուելով, իսկոյն ձերբակալվում են։ Ցաւոտի է, որ Կորանի պղծութեան դէմ սաստիկ պատիժ է սահմանուած։ Հայերը չորս օր մնում են բանտում և յետոյ արձակվում են. որովհետև քննութիւնը ցոյց է տալիս, որ սրբապղծութիւն անողները նոյն իսկ աստուածաբանութիւն ուսանող մահմեդական երիտասարդներն են։

ԽԱՐԶԱՆԻ ՀԱՅԵՐԸ

Բէյտերի գործ. հեռ. Վիեննա, փետ. 12.

Կ. Պոլսից այստեղ հասած հայկական լուրերը հաստատ վկայում են, թէ Սասունում պատահած դէպքերի նման չարիքներ տեղի են գտել նաև Խարզանի գաւառում, ուր քառասնից մինչև յիսուն գիւղեր այրուել ու քանդուել են, և այժմ գրեթէ անբնակ մնացել։ Այդ լեռնային գաւառի բնակիչները բացառապէս հայեր են։ Դարերէ ի վեր նահապետական կեանք վարելով, նրանք ապրում էին իրենց ամենածեր աւագների վարչութեան ներքոյ և զբաղուած էին խաշնարածութեամբ։ Նրանց մէջ կային բազմամարդ դերդաստաններ, որոնք ունէին հազար, երբեմն և

երկու հազար ոչխար։ Այդ բոլոր ոչխարները յափշտակուած են Թիւրքերի վերջին ապստամբութեան միջոցին։ — Քննիչ կոմիսիայի անդամ Օմէր-բէյի Բիթլիսի նահանգապետ նշանակուիլը սաստիկ քննադատւում է հայերի կողմից, քանի որ նրանք համոզուած են, թէ այդ պաշտօնն անմիաբանելի է կոմիսիայի անդամին վայել անկախութեան հետ և նրան տրուած է վկաների վրայ ազդելու համար։ Վկաները հարկաւ կը վախենան համարձակ ցուցմունքներ անել, իմանալով որ նահանգապետը յետոյ կը պատժէ նրանց ամեն մի ճշմարիտ վկայութեան համար։

ՆՈՐ ՄԻՏԻՆԳ

Անցեալ երեկոյ մի շատ բազմամարդ միտինգ կայացաւ Լամբէթ թաղամասում, ուր պրոֆեսոր Մինաս Շերազի ընթերցանութիւնից յետոյ միստր Մորէմի և միստր Զէլշիրի առաջարկութեամբ ընդունուեցաւ հետևեալ միաբան որոշումը. «Ներկայ միտինգը, լսելով պրոֆեսոր Մինաս Շերազից Հայաստանի պատմութիւնը և այդ երկրի կրած զրկանքները, կարծիք է յայտնում, թէ հայերի հալածուիլը Թիւրք իշխանութեան կողմից մի գայթակղութիւն է և ամօթալի նախատինք, որից ամեն մի մարդասէր սիրտ պիտի յուզուի, և յոյս է տածում, թէ Բ. Դուան հետ դիւանագիտական յարաբերութիւն ունեցող քաղաքակիթ պետութիւններն ազդու միջոցներ գործ կը դնեն՝ հայերին ազատելու և այդ ազգին ազատ և արդար կառավարութեան բարիքը շնորհելու համար, որոնք խոստացուած են Բեռլինի դաշնագրութեամբ։ Այս միտինգը որոշում է նաև շնորհակալութիւն յայտնել պրոֆեսոր Մինաս Շերազին իւր հետաքրքրելի ընթերցանութեան համար։»

Փ. Վ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼՕՆԴՕՆԻՑ հեռագրում են «Նով. Վր.»-ին թէ «Daily News»-ի մէջ Տրապիզոնից տպուած է մի հայի նամակ, որի մէջ ասուած է թէ տաճիկները և հայերն այժմ հասկացել են որ Անգղիան ամենևին լրջօրէն չէ հետևում որ Հայաստանում ըէֆօրմներ մտցնուի։ Բրիտանական կոմիսար Զիպլէյը զարմացնում է ամենքին իւր կատարեալ անձանօթութեամբ Արևելքին և նրա գործերին. իսկ ընդհակառակն ռուսաց կոմիսար պ. Պրժէվալսկին մեծ տակտ և եռանդ է ցոյց տալիս և նրան պաշտպանում են ֆրանսիական կոմիսարները։ Անգղիական լրագրի թղթակիցը ցանկութիւն է արտայայտում որ Ռուսաստանը համաձայնի յանձն առնել հովանաւորութիւն հաստատել հայաբնակ գաւառներում։

***

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՒՊՕԼՍԻՑ հեռագրում են Լօնդօնի լրագրներին, փետրվարի 7 - ից. — «Պարլամէնտի բացման ժամանակ Թագուհու գահական ճառի մէջ արուած ակնարկները և Բոզբերիի ճառի այն մասը, որի մէջ խօսվում է Փոքր-Ասիայում ըէֆօրմներ մտցնելու անհրաժեշտութեան մասին՝ սաստիկ տպաւորութիւն են գործել ինչպէս սուլթանի պալատում, նոյնպէս և ամբողջ Տաճկաստանում։ Տեղական լրագրներին արգելուած է կարծիքներ յայտնել գահական ճառի մասին, որի միայն մի մասն է տպուել տաճկական լրագրներում։

Դիպլոմատիքական շրջաններում ենթադրում են որ անհրաժեշտ կը համարուի վեհաժողով հրաւիրել այն պետութիւններից, որոնք ստորագրել են Բերլինի դաշնագիրը։

Բ. Դուան հրամանով «Times» լրագրի յունվարի 31-ի համարը փոստից չուղարկուեց բաժանորդներին, որովհետև նրա մէջ մի յօդուած կար, որ նկարագրում էր տաճիկ կառավարութեան վերաբերութիւնը Փոքր-Ասիա գնացող եւրոպական թղթակիցներին։

***

ՀՌՈՎՄԻՑ «Daily Chronicle» լրագրի յատուկ թղթակիցը հեռագրում է փետրվարի 10-ից.— «Կարդինալների մէկից ես իմացայ որ հաստատ է այն լուրը, թէ սուլթանը խնդրել է Պապին հայկական խնդիրը վճռելու միջնորդութիւնը յանձն առնել։ Այդ առաջարկութիւնը սուլթանը արել է հայ-կաթոլիկների պատրիարք Ազարեանի դրդմամբ։ Պապը մերժելով հանդերձ այդ առաջարկութիւնը՝ սուլթանին իմացրել է թէ նա շատ մեծ խելօքութիւն կանի քրիստոնեայ նահանգապետներ նշանակելով այն նահանգներում, ուր քրիստոնեաները ազգաբնակութեան մեծամասնութիւնն են կազմում։ Ասում են որ սուլթանը չափազանց դժգոհ է մնացել Պապի այդ խորհրդից։»

***

ՏՐԱՊԻԶՕՆԻՑ հեռագրում են «Daily News»-ին.— Քրդերը քաջալերուած այն դանդաղութիւնից, որով կատարվում է Սասունի գործերի քննութիւնը, Բիթլիսի նահանգում նոր անգթութիւններ են կատարել։ Թահսիմ փաշան իրեն պաշտօնից արձակելուց անմիջապէս առաջ հրամայեց բանտարկել այն բոլոր հայերին, որոնց ցուցմունքները կարող էին լոյս ձգել նրա գործած յանցանքների վրայ։ Բանը նրանումն է որ Սասունում ոչ մի ապստամբութիւն չէ եղել և հայերին կոտորել են առանց որ և է պատճառի։

***

Կ. Պօլսոյ թերթերում կարդում ենք.

«ՀԱՄԻՏԻՒ հեծելազունդերուն վերայ կայսերական Իրատէի մը համաձայն աւելցուելիք հեծելազօրքերու գումարտակները պիտի ընտրուին զօրաբնակներու հեծելազօրքերու գունդերէն և ասոնք յառաջիկայ գարնան միանալով Համիտիէ հեծելագունդերուն, զինուորական մարզանքներու պիտի սկսին։»

—

«Եռզոատի քննիչ Ապտուլլահ Թահիր էֆէնտիի երկրորդ կարգի Մէճիտիէ պատուանշան տրուեցաւ։»

***

ՀՌՈՎՄԻՑ «Daily Chronicle» լրագրի յատուկ թղթակիցը հեռագրում է փետրվարի 10-ից.— «Կարդինալների մէկից ես իմացայ որ հաստատ է այն լուրը, թէ սուլթանը պատրաստել է Պապին հայկական խնդրի վերաբերեալ մի ուրախալի պատգամ։ Ինչպէս որ հայտնի է, Պապը Ազարեանի դրդմամբ։ Պապը մերժելով հանդերձ այդ առաջարկութիւնը՝ սուլթանին իմացրել է թէ նա շատ մեծ խելօքութիւն կանի քրիստոնեայ նահանգապետներ նշանակելով այն նահանգներում, ուր քրիստոնեաները ազգաբնակութեան մեծամասնութիւնն են կազմում։ Ասում են որ սուլթանը չափազանց դժգոհ է մնացել Պապի այդ խորհրդից։»

***

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ հեռագրում են տեղական ռուս լրագրներին.— Թիֆլիզի քաղաքի պատգամաւորութիւնը փետրվարի 10-ին Պետրոպավլովսկի մայր եկեղեցում մեծ բազմութեան ներկայութեամբ հոգեհանգիստ կատարելուց յետոյ Հանդուցեալ Աղեքսանդր III-ի գերեզմանի վրայ մի արծաթեայ պսակ դրեց։

***

Համաձայն 1883 թուականի սեպտեմբերի 26 ից ներքին գործոց նախարարի հրատարակած կանոնների, մինչև այժմ Ռուսաստան գտնուող դաշնակցողները և դաշնակցողները կարող էին Կովկասում ապրելու անցագիր ստանալ միայն այն դէպքում, եթէ վիլայական ներկայացնէին իրենց հիւպատոսներից. իսկ այժմ այդ կարգը փոխուած է և վերոյիշեալ օտարազգիներն այսուհետև կարող են նոր անցագիր ստանալ ներկայացնելով տեղական իշխանութեան կամ իրենց ազգային անցագրերը և կամ ժամանակն անցած ռուսական անցագիրը։

***

Կարսի երկրամասում շինութեան գործերը տեղի ունեցաւ փետրվարի 10-ին մեծ հանդիսով։ Հանդիսին ներկայ էին Կովկասի կառավարչապետ զեներալ սգիտ. Ղերեմեսեվը, նրա օգնական կոմս Տատիշչեվը, Կովկասեան ճանապարհների հաղորդակցութեան վարչութեան կառավարիչ Ստատկովսկին և ուրիշ շատերը։ Երկաթուղու շինութիւնը կատարվում է շատ արագ և Քուռի վրայով անցնելիք առաջին կամուրջի հիմքն արդէն ձգուած է։

***

ՄԵՏԵԼԻԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Ամսոյս 9 ին Մետելի «Ս Վարդան» կոչուած նորաշէն եկեղեցում մատուցուեցաւ սուրբ պատարագ 'ի յիշատակ սուրբ «Վարդանեան» նահատակաց։ Հանդիսաւոր պատարագը վերջանալուց յետոյ բանտերի հայ-եկեղեցաց քահանայ և պատարագիչ հայր Գրիգորիս Մատինեանցը խուռն բազմութեան առաջ ազդու խօսքերով բացատրեց Ս. Վարդանանց տօնի վսեմ նշանակութիւնը և ապա յորդորեց մեզ՝ յետնորդներիս ճշտութեամբ հետևող լինել այդ պաշտելի անձնաւորութիւններին, մեր անձը չխնայելով այն եկեղեցուն, որի գոյութեան հետ է կապուած մեր ազգի բաղդը։ Ջերմեռանդ և Վարդանի յիշատակութեամբ ոգևորուող հասարակութեան համար այդ օրը միայն բանտի արևելեան դուռը բաց էր իւր եկեղեցում իւր կրօնական իրաւունքը կատարելու համար և արդարև՝ ուրախալի է այսպէս արձանագրել այն իրողութիւնը, որ առաւօտեան ժամի 9 ից մինչև երեկոյեան ժամի վեցը գունդագունդ յաճախողների թիւը շատ բարձրացաւ, չնայելով որ այդ նորաձև եկեղեցու իսկ տօնական օրը դեռ ժողովրդին հաստատապէս յայտնի չէր, մանաւանդ որ մինչև այժմ եկեղեցու տարեդարձը կատարուում էր Սման օրը, այն է փետրուարի 14-ին, բայց այժմ որոշուած է այսուհետև հանդէսը կատարել Ս. Վարդանանց տօնի օրն։

Օգտուելով եկեղեցւոյ տօնից, կամենում եմ մի քանի խօսքով բացատրել սորա հիմնարկութիւնը և հաստատութիւնը։ Տփխիսումս կայ երկու բանտ, մէկն է Մետեխի, իսկ միւսը՝ Նահանգական. դրանց վրայ հսկող և կարգադրող, թէ նիթական և թէ այլ մասերի վերաբերեալ, կազմուած է մի առանձին «Քանոնչի Խորհուրդ», նախագահութեամբ տեղւոյս պ. Նահանգապետի։ Ի վաղուց հետէ երկու բանտերի մէջ կան ռուսաց համար երկու եկեղեցի, որոնցից նշանաւորն է Մետեխի հին վրաց հայկական ոճով կառուցած հսկայական եկեղեցին, ուր թաղուած է և՛ մեր անմահ հայրենակից Շուշանիկը, Ս. Վարդան զօրավարի նահատակ դուստրը։— Կարիք զգալով հայկական եկեղեցւոյ, կոմիտէտը վաղուց արդէն հիմնած է «Նահանգական» բանտում մէկ փոքրիկ եկեղեցի հայ բանտարկեալների համար, որպիսին և՛ հաստատեց նոյն իսկ Մետեխի բանտում 1892 թուականին, որի օծումն կատարուեցաւ 1893 թուին Կոմիտէտը, սկզբունքով որոշելով Մետեխի ամրոցում հայկական փոքրիկ եկեղեցի ունենալու հարցը, իրական հանգամանքը։ Տփխիսի տեղական պատուաւոր քաղաքացի պ. Ն. Փրիգոնեանցին և յատկապէս բանտերի հայ եկեղեցաց համար նշանակուած բարեկամ Գրիգորիս քահանայ Մատինեանցին։

Այստեղ պէտք է խոստովանած, որ ընտրութիւնը շատ յաջող էր։ Պ Փրիգոնեանցը կատարելապէս պակաց իրաւունքը յանձնած գործը, հանգանակութիւն բանալով ինչպէս կոմիտէտի հայ անդամոց, նոյնպէս և այլ բարեպաշտ անձանց շրջանում, որոնք իրանց նուէրը չխնայեցին այդ սուրբ նպատակի համար։ Մեծ աջակցութիւն է ցոյց տուած, մանաւանդ եկեղեցւոյ ներքին բարեգարդութեան վերաբերեալ, և՛ հայր Գրիգորիս քահանայ Մատինեանցը, որի շնորհիւ այժմ եկեղեցին մի ուրախալի պատկեր է ներկայացնում թէ իւր մաքրութեամբ, թէ համապատշաճ դասաւորութեամբ և թէ եկեղեցական զարդերով։ Միակ պակասութիւնը եկեղեցւոյ այն կարելի է համարել, որ եկեղեցին զուրկ է միայն քահանայական զգեստից— երկու եկեղեցիների համար մէկ հատ ունենալով. այժմ լսում ենք, որ բարեկրօն հայրը դիմել է ուր հարկն է և՛ այդ պակասը լրացնելու։

Եկեղեցին օծուելով, անուանուեցաւ «Ս. Վանդանայ» եկեղեցի, 'ի յիշատակ վերոյիշեալ հայ նահատակաց։

Արդարև՝ շատ մեծ զուգադիպութիւն — ուր թաղուած է դուստրը, իւր դերեզմանի վրայ ունենալով բարձրակամար քարաշէն եկեղեցի, այնտեղ է և՛ հօր անմահ յիշատակի սրբարանը։

Ռ-խոսոր։

10 փետրուարի 1895 թ.
Տփխիս։

***

ՀԱՆԴԷՍ Ս. ՆՈՒՆԷԻ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՅՈՒՄ

Ամսոյս 5-ն, կիւրակի, տեղւոյս ս. Նունէի օրիորդաց ուսումնարանում կատարուեցաւ տարեկան հանդէս, որ պատուեցին իրանց ներկայութեամբ երկրիս պ. կառավարչապետը իւր ամուսնով, Նորա օգնական կոմս Տատիշչեվը, Տփխիսի Նահանգապետը, Հայոց թեմական առաջնորդը, Գօրուայ և Ալլահվերդու վրաց եպիսկոպոսները և քաղաքային ու զինուորական վարչութեանց ներկայացուցիչները։ Հանդէսը զուտ երաժշտական բնաւորութիւն էր կրում, որ կատարում էին աշակերտուհիները թէ խրմբովին և թէ դաշնամուրի վրայ։

Հանգամանքը արդէն իւրաքանչիւր ջահիլ իւր համար մի յաւիտենական նախատինք, մի բարոյական մահը կը ճանաչէ

Հանգամանքի այդ կերպ ընդունուած մտածողութիւնը ծնողական սրտի վրայ անգամ կը ճաճայ, և նոքա շատ անգամ կը զգուշացնեն իրանց երիտասարդ զաւակց սակաւակեաց կեանք ունենալ, ապրել և բաւականանալ քչով, կերաձէն ու խմաձէն անպատճառ բաժին թողուլ աղքատաց և թոչնոց անուանով, որպէս զի պակի օրը այլ ևս տեղիք չմնայ անպատուաբեր և անուանարկ բքաբեր փոթորկի։

Երջանիկ են այն ամուսիններ, մանաւանդ երկու սիրոյ նեռահարները, — այսպէս ընդունուած է — որ նոքա այդ տօնի օր բաղդաւորին ամուսնական սուրբ և ելջանիկ լծով։ Այդ անշուշտ նախանշան պիտի լինի նոցա այն ապագայ կեանքին, որ պիտի բոլորի սիրագեղուն շրջաններով, օրինակելի նշաններով։ Եւ արդարև յանուն այդ միակ տենչին, բոլոր որդեսէր ծնողք կը ջանան որ Սուրբ Սարգսի տօնի օր ամուսնացնել իրանց զաւակց։—«Կեղնի, աճեպս, վըր բոզ ձիաւոր սրբ Սարգսի տօնի օր կաս պիմ զիմ տղի կարմիր-կանաչ «խաչ-փոկ» տեսնամ օշաղիս մէջ ջուխտ մը տարկ՝ գորգուրալի կղզոցներով ու փակիմ զաչքերս...

«Սրբ Սարգիսն էր իրա ձիաւոր,
Ձեռքի մըզրակս փունջուխլաւոր,
Առաւ թրաւ զըր սիրոյ կաքաւ,
Սիրոյ ճանպախ մըզի տրաւ»։

—

«Սրբ Սարգիսն էր մեծ զօրաւոր,
Ջահիլ-ջիւան, ինք ձիաւոր,
Տուշմընին յաղթող՝ իր սուրբ հաւատով,
Զինք ձէնողին՝ շուտով հասնող»։

—

«Քըզի մեռնիմ, ով սրբ Սարգիս,
Գըհել ձիովդ մըզի լէ հասնիս,
Թուփ-մըզրխովդ իմդատ եղնիս,
Զմըզի հասցուս մըր մուրազին»...

Իգիլէաշ։

ԱՐԴԷՆ եկաւ ու անցաւ «Էրագահաս բոզ ձիաւոր սրբ Սարգսի» տօն և վերահասան "բարեկենդաք» օրեր։

Սուրբ Սարգսի պատմական տօնը մեծ տեղ է գրաւեր Մշոյ ժողովրդի յիշողութեան մէջ։

Գեղջուկ ժողովուրդի բազմագոյն մասը, մանաւանդ աղջիկ ու տղայ ջահիլ դասակարգը այդ տօնի օրը վեց օրուայ ընթացքով բոլորովին անսուազութեամբ, պահք ու ծոմապահութեամբ կոչնչնէ այդ շաբաթուայ ամենավերջին օրը, այն է շաբաթմտի երեկոյ, որի պահուն արդէն Հայաստանեայց Եկեղեցին՝ որպէս նախատօնակ՝ ոգևորութեան բուռն արտայայտութեամբ կը ձայնէ Սուրբ Սարգսի յիշատակին յատուկ նուիրած հոգեզմայլ ու քաղցրալուր շարականը։ Ծոմապահ ջահիլները այդ երեկոյ՝ գլխի ընթրիքի՝ կուտեն նախապատրաստեալ «ՀՈՂԷՒԼԷ» և մի անսահման յոյսոյ վառ զգացմունքներով կը մտնին Մորիէոսի գիրկ։ Նոքա, անցաւոր աշխարհիս դառնութեան բաժակի ըմպումով տոգորեալ այդ ջահիլները, ննջեալ պահուն ուտելով այդ վերին աստիճանի աղի փոքրիկ բաղարջը, որ կատարեալ մի գունդ աղի նմանութիւն կը բերէ, ի քուն կը մտնեն, այն միակ տենչով, որպէս զի շնորհիւ «էրագահաս բոզ ձիաւոր սրբ Սարգսին», սիրոյ առարկայ դարձած էակը ըմպելու մի բաժակ, կամ գէթ իւր մատի թացութեամբ մի կաթիլ ջուր տայ իրանց։ Եւ այդ բաժակ ջուրն արդէն, «Աստուծոյ հրամանով», պիտի կազմէ նոցա ամուսնութեան հիմնավէմը։

Բացի այդ «ՀՈՂԷՒԼԷՒ», տօնախմբութեան աւուր մէջ յատուկ Սուրբ Սարգսի անունով եփած ճաշէն, որին գեղջուկ ժողովուրդը կանուանէ «փոխընդէ ճաշ», մի բրդունջը ջահիլներէն ոմանք առնելով մի խաֆիկի և կամ այլ առարկայի վրայ, կը դնեն մի բարձր կտուրի—«ՊՇԷՆ» և սրտի մի առանձին անհամբերութեամբ կը սպասեն մինչև որ գայ «ԱՂԷ» թռչունն և կոցահարութեամբ առնէ ու թռցնէ մի այլ կողմի վրայ։

Եթէ նա տանի դէպի գերեզմանատան կողմ, այդ անշուշտ սգոյ մեծ նշան պիտի ընդունել. մօտիկ ապագան պիտի բօթէ նորա և կամ իւր դեռ անյայտութեան մէջ թաղուած սրտակցի մահը, և կամ թէ իւր կեանքի ընթացքում առանց կարմիր ու կանաչ «խաչ-փոկ» տեսնալու, որ է ամուսնութեան նշան, առանց վերջապէս այս երկրաւոր առագաստին արժանանալու՝ պիտի սլանայ առ վերնոցն պատրաստած առագաստի մէջ... Բայց եթէ միւս թռչուններ գան և ուտեն «պօղոզի» վրայ դրուած այդ խորհրդաւոր «փոխընդէ ճաշը», այդ դէպքում պէտք է դուշակել, որ նոքա վերին աստիճանի անբաղդ էակներն են աշխարհիս վրայ և նոցա երազած ամուսնութիւնը դեռ շատ հեռու է լինելու։ Եւ եթէ անձեղը առնելով այդ պատառ ճաշ թռնի և նստի մի որոշեալ կտուրի վրայ և կամ անցնի մի որոշեալ կողմով, այդ դէպքում ապագայ նշանածը պէտք է այն կողմից ակնկալել։

Ցանուն սուրբ Սարգսի պատրաստած «փոխինդը» միւս կողմից՝ աւանդական տեսակէտով՝ նոյնպէս պակաս տեղ չի գրաւէ ծիսական աշխարհում։

Հինգշաբթի լոյս ուրբաթ գիշերը, արդէն փողինդը բոլորովին խարկուած, աղցուած և բոլորովին մի ապահով տեղ դրուած պիտի լինի։

Ապահով ասի նորա համար, որովհետև ուրբաթ գիշեր, երբ «բոզ ձիաւոր սրբ Սարգիս» ուռումի (յոյնի) աղջկան, որ իւր սիրուհին է, փախցնէ, անշուշտ պիտի այցելէ բոլոր այն տները, որոնք սրբապահութեամբ ընդունէր են իւր ծոմն ու պահքը, որոնք անձեռնմխութեամբ պահեր են մինչև այդ գիշեր յանուն իւր պատրաստած փոխինդը։

Եւ նա երբ իւր նշանաձով տեսնի աւանդի այդ աստիճանին անեղծ սրբութիւնը, ի նշան սիրոյ և յարգանաց, պիտի հրամայէ իւր գրչէ բոզ ձիուն (Ոժոյգ ճերմակ), որ նա իւր աջ ամբակով մի դրոշմ թողու փոխնդի տաշտի երեսին խաչակնքութեան նշաններ դնել, ամեն լուսաձէգին ուղղուել դէպի ապշթարան և քրիստոնէականը շանաձևութեամբ գոհաբանական մըր մունջներ կատարել, յանուն զանազան պատահարների և դժբաղդութիւնների մատաղներ կատարել այս ու այն սուրբերին, հայոց նուիրական վայրեր ամենաջերմեռանդութեամբ ուխտեր գնալ տօներ կատարել, խունկ ու մոմ ծխել ու վառել, ամեն կիրակմտին տների ու բնակարանների մէջ խունկ ծխել, «Ծաղկէ-թաս» ըսուած ջրամանով՝ յանուն մի որոշեալ սուրբի, ջուր առնել և սրսկել հիւանդութեամբ վարակուած ոչխարաց հօտերի, տաւարաց նախիրների, ձիոց ցոյց կամ տօնացոյց, ուստի նոքա ենթագրական հաշիւներով սուրբ Սարգսի տօնի պահքը բռներ՝ էին իրական տօնօրէց երկու շաբաթ առաջ։ Երբ ծոմապահութեամբ փակած շաբաթի վերջին օր միայն զգացին իրաց սխալը, այս անգամ պահեցին ուղիղ երեք շաբաթ։ Եւ երբ պատճառը ուզեցինք իմանալ, պատասխանեցին, թէ այս երկու շաբաթ նորա համար աւել կը պահենք, որպէս մի Խրդրը-Նաբին չկասկածի որ մենք գիտութեամբ ենք ուզեցեր այդ սխալ քայլ անել։ Իսկ այդ դէպքում կարող է մեր ամբողջ գոյութիւնը՝ նիթական ունեցածով հանդերձ՝ մի րոպէում ի չիք դառնալ։

Նոցա առաջին և վերջին երդում ևս կը կայանայ սուրբ Սարգսի մի անգամուայ անուան յիշատակութեան մէջ։

Իսկ գալով այդ տօնի օրուայ մէջ եղած գործառնութեան մասին, պէտք է ասել նոյնպէս, որ գործ, պարապմունք և ճանապարհորդութիւնն անգամ բոլորովին կանգ կառնու այդ օր։ Դարաւոր պատահական փորձերն այն աստիճան երկիւղի տակ է առեր նոցա մտքեր, որ նոքա անպայման հաւատացած են, որ եթէ այդ տօնի օր մի որ և է գործ սկսեն կամ ճանապարհորդութեան ելնեն՝ թէկուզ մի բոլորովին ժերձակայ վայր գնալու համար, անպատճառ մինչև այդ րոպէին պարզ և ջինջ երեցած երկնակամարը մի ակնթարթում պիտի մռայլուի և այնպիսի մի փոթորկի տեղի տայ, որից այլ ևս ազատուիլը բոլորովին անհնարին պիտի համարել և կամ թէ հրաշք։ Եւ այդ տեղի ունեցած բքաբեր փոթորկի առ հասարակ կը վերագրեն ս. Սարգսի նշանաձի՝ այն է յոյն աղջկայ վերին աստիճանի որկրամոլութեան, ագահկերութեան։ Եւ այսօր անգամ դեռ ամուսնութեան լծի տակ չմնաղ երիտասարդներ և օրիորդներ մահացու մեղքի չափ ծանր կը համարեն իրանց համար՝ տակովին ուտել և սրբել մի պնակի մէջ եղած կերակուրը, որ մի գուցէ իւր ամուսնութեան վերջին օրերի մէջ տեղիք տայ մահաբեր բուքերի։ Իսկ այդ երամակների և միւս անասնոց վրայ։

Ընդունել և սիրով յանձն առնել կնքահայր և քաւոր գտանելու ամեն իրանց դիմող հային և այլ ոոցա նման հակամահմեդական երևոյթների հետ չկատարել նաև Համազ մահմեդական ծէսով և օրը հինգ անգամ, չընդունել Մուհամմէդին որպէս երկնաւոր ոգի, որպէս հաւասարակից Քրիստոսի, սարսափելի կերպով խորշել և ատել առ հասարակ բոլոր բուն մահմեդականներին՝ լինին նոքա թուրք, զինուոր, չէրքէզ, քիւրդ և այլ ցեղեր և ուրիշ մի կարգ հակամահմեդական նշաններ։ Զմտնելով սոցա նման բոլոր միւս քրիստոնէամերձ նշանների բացայայտութեան ու ցուցական թուահամարների մէջ, հարկաւոր է միայն ասել թէ Սուրբ Սարգիսը, որ նոցա բարբառով կը կոչուի «Խէրը Նէբի», մինչև ընդունելութեան, որ նոյն է ասել պաշտելիութեան որ եղանակի վրայ է կանգնած։

Նոքա, այդ երկու կիսամահմեդական քիւրդ ցեղերն ևս, սուրբ Սարգսի զօրութիւնը, եթէ ոչ հաւասար Քրիստոսի, գոնէ հաւասար Դաւուդ փեղամբարի (Դաւիթ Մարգարէն) և միւս սրբոց կընդունին։ Կը հաւատան որ ս. Սարգիսը արագահաս է, ինչպէս որ այդ միևնոյնը կ'երդէ մեր սուրբ Եկեղեցին ևս։ Կը հաւատան որ նա մոլորեալներին յուղղութիւն հրաւիրելու սրբազան պաշտօնում ընդուներ է նահատակ կեանք և այլն...

Նոքա սուրբ Սարգսի տօնը, որին ամբողջ մի շաբաթ են յատկացրած, կը պահեն ամենաջերմ ծոմապահութեամբ և շատերն ևս ամբողջ շաբաթ անսուազութեամբ կը բոլորեն։ Իսկ լոյս շաբաթը առանձին տօնախմբութիւններ կը կատարեն, զոհեր կանեն և ուրիշ ուրախական ցոյցերով կը զուարճանան։ Ես նոցա այդ երկու ցեղերին պատկանող 15 անձինք տեսի Տաճկաստանի մի կենդրոնական բանտի մէջ, ուր նոքա բանտարկուած էին զանազան յանցանքներով։ Եւ որովհետև Տաճկաստանի բանտերի մէջ առ հասարակ գոյութիւն չունի օրապետ Ս. Բարայեանը։ Այսօր հարկ ենք համարում հաղորդել որ Նորին Վեհափառութեան մօտ զանազան ժամանակ հրաւիրուած երեք օտար բժիշկներից երկուսը՝ այն է ակնաբոյժ Գ. Տարսայիձէն և Կովկասի կառավարչապետի անձնական բժիշկ Գ. Վ. Կիմօնտը հրաժարուեցին բժշկական խորհրդի համար իրանց առաջարկուած գրամական վարձատրութիւնից, յայտնելով Հայրապետին, որ իրանք արդէն վարձատրուած են Վեհի նման պաշտելի անձնաւորութեան սուրբ աջը և օրհնութիւնն առնելով, իսկ դրամը՝ խնդրել են Վեհին ամեն օր դադար չտուող չքաւորներին բաժանել։

***

ՄԱՀՎԱՆ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Ամսոյս 9-ին Մահվան հայոց եկեղեցին մատուցուեցաւ սուրբ պատարագ 'ի յիշատակ սուրբ «Վարդանեան» նահատակաց։ Հանդիսաւոր պատարագը վերջանալուց յետոյ բանտերի հայ-եկեղեցաց քահանայ և պատարագիչ հայր Գրիգորիս Մատինեանցը խուռն բազմութեան առաջ ազդու խօսքերով բացատրեց Ս. Վարդանանց տօնի վսեմ նշանակութիւնը և ապա յորդորեց մեզ՝ յետնորդներիս ճշտութեամբ հետևող լինել այդ պաշտելի անձնաւորութիւններին, մեր անձը չխնայելով այն եկեղեցուն, որի գոյութեան հետ է կապուած մեր ազգի բաղդը։ Ջերմեռանդ և Վարդանի յիշատակութեամբ ոգևորուող հասարակութեան համար այդ օրը միայն բանտի արևելեան դուռը բաց էր իւր եկեղեցում իւր կրօնական իրաւունքը կատարելու համար և արդարև՝ ուրախալի է այսպէս արձանագրել այն իրողութիւնը, որ առաւօտեան ժամի 9 ից մինչև երեկոյեան ժամի վեցը գունդագունդ յաճախողների թիւը շատ բարձրացաւ, չնայելով որ այդ նորաձև եկեղեցու իսկ տօնական օրը դեռ ժողովրդին հաստատապէս յայտնի չէր, մանաւանդ որ մինչև այժմ եկեղեցու տարեդարձը կատարուում էր Սման օրը, այն է փետրուարի 14-ին, բայց այժմ որոշուած է այսուհետև հանդէսը կատարել Ս. Վարդանանց տօնի օրն։

Օգտուելով եկեղեցւոյ տօնից, կամենում եմ մի քանի խօսքով բացատրել սորա հիմնարկութիւնը և հաստատութիւնը։ Տփխիսումս կայ երկու բանտ, մէկն է Մետեխի, իսկ միւսը՝ Նահանգական. դրանց վրայ հսկող և կարգադրող, թէ նիթական և թէ այլ մասերի վերաբերեալ, կազմուած է մի առանձին «Քանոնչի Խորհուրդ», նախագահութեամբ տեղւոյս պ. Նահանգապետի։ Ի վաղուց հետէ երկու բանտերի մէջ կան ռուսաց համար երկու եկեղեցի, որոնցից նշանաւորն է Մետեխի հին վրաց հայկական ոճով կառուցած հսկայական եկեղեցին, ուր թաղուած է և՛ մեր անմահ հայրենակից Շուշանիկը, Ս. Վարդան զօրավարի նահատակ դուստրը։— Կարիք զգալով հայկական եկեղեցւոյ, կոմիտէտը վաղուց արդէն հիմնած է «Նահանգական» բանտում մէկ փոքրիկ եկեղեցի հայ բանտարկեալների համար, որպիսին և՛ հաստատեց նոյն իսկ Մետեխի բանտում 1892 թուականին, որի օծումն կատարուեցաւ 1893 թուին Կոմիտէտը, սկզբունքով որոշելով Մետեխի ամրոցում հայկական փոքրիկ եկեղեցի ունենալու հարցը, իրական հանգամանքը։ Տփխիսի տեղական պատուաւոր քաղաքացի պ. Ն. Փրիգոնեանցին և յատկապէս բանտերի հայ եկեղեցաց համար նշանակուած բարեկամ Գրիգորիս քահանայ Մատինեանցը, որի շնորհիւ այժմ եկեղեցին մի ուրախալի պատկեր է ներկայացնում թէ իւր մաքրութեամբ, թէ համապատշաճ դասաւորութեամբ և թէ եկեղեցական զարդերով։ Միակ պակասութիւնը եկեղեցւոյ այն կարելի է համարել, որ եկեղեցին զուրկ է միայն քահանայական զգեստից— երկու եկեղեցիների համար մէկ հատ ունենալով. այժմ լսում ենք, որ բարեկրօն հայրը դիմել է ուր հարկն է և՛ այդ պակասը լրացնելու։

Եկեղեցին օծուելով, անուանուեցաւ «Ս. Վանդանայ» եկեղեցի, 'ի յիշատակ վերոյիշեալ հայ նահատակաց։

Արդարև՝ շատ մեծ զուգադիպութիւն — ուր թաղուած է դուստրը, իւր դերեզմանի վրայ ունենալով բարձրակամար քարաշէն եկեղեցի, այնտեղ է և՛ հօր անմահ յիշատակի սրբարանը։

Ռ-խոսոր։

10 փետրուարի 1895 թ.
Տփխիս։

***

ՀԱՆԴԷՍ Ս. ՆՈՒՆԷԻ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՅՈՒՄ

Ամսոյս 5-ն, կիւրակի, տեղւոյս ս. Նունէի օրիորդաց ուսումնարանում կատարուեցաւ տարեկան հանդէս, որ պատուեցին իրանց ներկայութեամբ երկրիս պ. կառավարչապետը իւր ամուսնով, Նորա օգնական կոմս Տատիշչեվը, Տփխիսի Նահանգապետը, Հայոց թեմական առաջնորդը, Գօրուայ և Ալլահվերդու վրաց եպիսկոպոսները և քաղաքային ու զինուորական վարչութեանց ներկայացուցիչները։ Հանդէսը զուտ երաժշտական բնաւորութիւն էր կրում, որ կատարում էին աշակերտուհիները թէ խրմբովին և թէ դաշնամուրի վրայ։

Այս հանդէսը շատ լաւ տպաւորութիւն թողնելով հանդիսականների վրայ, որոնք ծափահարութիւններով վարձատրում էին կատարողներին, ապացուցեց, որ երաժշտութեան վրայ մեծ ուշք է դարձնում, շնորհիւ դոյն արուեստի համար նշանակուած տեսուչ Կեսնէրի։ Դաշնամուրի վրայ հարողներից բուռն խրախուսանաց արժանացաւ VI դասատան աշակերտուհի Մանանիա Աբովեանը։

Հանդէսից յետոյ պարգևներ բաժանուեցան թէ գիտութեանց և թէ արուեստի մէջ յառաջադիմութիւն ցոյց տուող աշակերտուհիներին և ապա հանդիսականները անցան այն դահլիճը, ուր աշակերտուհեաց ձեռագործական աշխատութիւնները՝ ի ցոյց էին դրուած, որոնք, պէտք է ասած, գերազանցում էին իրանց նրբութիւններով։ Հանդէսի մի ջոջին ուսումնարանի պ. տեսուչը կարդաց իւր տարեկան հաշիւը, որից քաղում ենք հետեւեալ տեղեկութիւնները. — Աշակերտուհեաց թիւը առ 1 յունվարի 474 է, որոնցից 51%, կազմում են ռուսներ, 26%-վրացուհիք, և 16% հայուհիք. ըստ դաւանութեանց 76%—ուղղափառներ, 16% հայ-լուսաւորչականներ, 5% հռոմէական կաթոլիկներ, իսկ 3% օտար դաւանութեանց անձինք։

Մտած են և մահմեդական դաւանութեան աղջկերք, որոնց թիւը այժմ 8 ի է հասնում։ Անցեալ ուսումնական տարուայ վերջը 441 աշակերտուհուց աւարտել են 38 հոգի, որոնցից հինգը արժանացել են ոսկեայ, իսկ 3ը արծաթեայ խաչերի։ Ուսումնարանի պահպանութեան համար Արքունական գանձարանից և թէ այլ միջոցներից ստացուել է 130,742 ռուբլի, որից ծախսուել է հաշուետարուայ ընթացքում 96,000 ռ. այնպէս որ առ մէկն յունուարի մնում է դարձեալ 34 հազար ռուբլուց աւելի։ Այս ուսումնարանի կեանքում մի նոր երևոյթն ևս այն է, որ սկսել են այստեղ աւանդել խոհարարութիւն, կաթնատնտեսութիւն, թռչնապահութիւն և շերամապահութիւն, որոնք կը նպաստեն ինչպէս ֆիզիկական գործունէութեանը, այսպէս և առօրեայ կեանքի անհրաժեշտ պետոյքների հետ ծանօթանալուն։ Բոլոր գործնական զբաղմունքները լի նում են դասերից ազատ ժամանակներում՝ առաւօտեան մինչև դասերի սկսուելը, կէսօրին (նախաճաշից յետոյ) և երեկոյեաներն էլ ժամի 5-ն, մօտաւորապէս օրական 1 ժամից մինչև $1^1/_2$ ժ.։ Գործնական զբաղմունքներն սկսւում են VI դասարանից այս կարգաւորութեամբ — VI դասատան աշակերտուհիք պարապում են բոյսերի և թռչնոց հոգատարութեամբ, հինգերորդեցիք — կաթնատնտեսութեամբ և շերամապահութեամբ. վեցերորդեցիք և եօթներորդեցիք — խոհարարական արուեստով։ Իրականապէս ցոյց տալու համար ուսումնարանումը արդէն շինուել են օրինակելի լոհանոց, կաթնատուն, պանրատուն, կովանոց և թռչնարան։ Այժմ այդ զբաղմունքներով առաւելապէս պարապում են գիշերօթիկ աղջկունք, մտադրութիւն կայ և երթևեկ օրիորդաց ևս աւանդել նոյն տեղեկութիւնները, որ անշուշտ շատ ցանկալի է։

*
* *

ԼՕՌՈՒՑ.—մեզ գրում են.

«Լեղուաբը հանքային հարստութեան անսպառ աղբիւր է։ Ոսկու, արծաթի և պղնձի հանքեր լինելով—Ախտալում և Պղնձահանքում, այժմ էլ պղնձի հանք է գտնուել և նոյն լեռան հիւսիս-արևմտեան փեշերումն, Պրիվոլնի կոչուած ռուսաբնակ գիւղի կալուածքում։ Պղնձահանք կայ և նոյն սարի «Ծժուար» ուրթ կոչուող մասումն, որ պատկանում է Ա գարակ գիւղի սարահանդին։ Այդ հանքը շատ պարզ է լինում, երբ անձրևային ջրերը քշում տանում են վրայի հողը։

*
* *

ԱԽԱԼՑԽՍՅԻՑ մեզ գրում են.—Ամսոյս 9-ին, հինգշաբթի տեղիս Կարապետեան դպրոցի դահլիճում Վարդանանց տօնի առիթով մի հանդէս էր կազմած։ Հանդիսին ներկայ էին երկսեռ դպրոցների ուսուցչական խումբը, աշակերտներն ու աշակերտուհիք և ժողովրդեան մի ստուար խումբ։ Հանդէսը բացուեց խմբական երգով, որից յետոյ օրուայ առիթով խօսեց դպրոցի աւագ ուսուցիչը։ Ապա հեռաւ աշակերտներից ու աշակերտուհիներից մի քանիսը անդիր ասացին ընտիր բանաստեղծութիւններ։ Երգեցիկ խումբը փոփոխակի երգում էր։ Երգեցողութիւնը յաջող էր։ Հանդիսի տպաւորութիւնը ընդհանրապէս վատ չէր։

*
* *

ԵՐԻՒԱՆԻՑ մեզ գրում են.—«Ամսոյս 9-ին թեմական դպրոցում մի փառաւոր հանդէս կատարուեցաւ Կրօնական առաջին պատերազմի սրբազան նահատակների յիշատակին։ Դահլիճը լիքն էր խուռն բազմութեամբ։ Վարչութեան կարգադրութեամբ ուսուցիչ պ. Ն. Տ. Կ. մի ճառ խօսեց՝ բացատրելով այն պատճառները, որոնք առաջ բերին մեծ պատերազմը։ Աշակերտները կարդացին Եղիշէից և այլ հեղինակներից պատշաճաւոր հատուածներ։

*
* *

ԲՆԴՈՒ 11 փետրվարի.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Սրուան ուրախալի նորութիւնը ամսոյս 9-ին կլուբի դահլիճում կայացած «հայկական երեկոյթն» է, յօգուտ Մարդասիրական Ընկերութեան զրադարանի։ Այդ երեկոյթն այնպիսի հիանալի տպաւորութիւն է թողել հանդիսականների վրայ, որ ամեն տեղ և շարունակ խօսում են նրա մասին։ Այդպիսի երեկոյթ Բագուն դեռ չէ տեսել. դեռ չորս օր առաջ բոլոր տոմսակները ծախսուել էին (մօտ 1800 ռուբլի դումարի) և պահանջը այնքան մեծ էր որ ստիպուած էին դահլիճի մէջ երկու նոր կարգ բազկաթոռներ ևս աւելացնել և աթոռներ դնել միջանցքներում։ Երեկոյթին ներկայ լինելու շատերի այդ բուռն ցանկութիւնը կարելի է բացատրել նրանով որ երեկոյթի ծրագիրը կազմուած էր շատ հետաքրքրական. մանաւանդ - ամենքն ուզում էին տեսնել «Գիւղական հարսանիքը»։ Եւ յիրաւի այդ հարսանիքի հանդիսաւոր ընթացքը մեծ զուարճութիւն պատճառեց հանդիսականներին։ Յանկարծ դահլիճի մի ծայրից անպսակելի կերպով դուրս են գալիս գիւղացիք դուդուկով և նաղարայով, ահագին աղմուկով, վառած մոմերը ձեռներին։ Նրանք շրջապատել են զարդարած նորահարսին և նորափեսային հանդէսին առաջնորդում է «թոյրաշին» (պ. Խալաղեան), որ ահագին դագանակը ձեռին հարաւ-հրոցով ճանապարհ է բանում ամբոխի միջով, պարում է, երգում է և երգել է տալիս ուրիշներին. միւս կողմից տեսնում ես դրանց հանդիպում են խնամիները և նրանց կողմից մէկի ռուսերի վրայ մի ահագին ոչխար, եղմիւրների վրայ երկու վառած մոմեր կպցրած առաջ են բերում և ուզում են իբր թէ մորթել, և այլն և այլն։ Այդ գիւղական հարսանիքն այնքան զուր եկաւ ներկայ եղողներին, որ ամենքն էլ դերակատարների հետ միասին կարծէք մասնակցում էին։ Պ. Մելոնի գրած կենդանի պատկերները հրաշալի էին և գեղարուեստական մեծ զուարճութիւն պատճառեցին։ Ոչ պակաս յաջող անցաւ և «Ճոնի ամուսնութիւն» պիէսը։

Ամբողջ դահլիճը՝ բնից մինչև հիւրասենեակը զարդարուած էր արհեստական ծաղիկներով, գիրլիանդներով, թանկագին գորգերով և տոնական դոյնդոյն դրօշակներով։ Շատ գեղեցիկ զարդարուած էին բուֆետը և ծաղկափնջերի քիոսկ—վրանները։ Նկատելի էր որ ոչ ոքի կողմից գժգոհութիւն չկայ, ամենքը գոհ էին և ուրախ և այդ տրամադրութեան տակ ևս ցրուեցին։ Պէտք է շնորհակալ լինել Տիկնանց Կրասիլնիկեանից և Ղուկասեանից, որոնք կարգադրիչներ էին երեկոյթի և ամեն ջանք գործ էին դրել շքեղութիւն տալ երեկոյթին։ Մուտքը եղել է 4500 ռուբլի, ծախքը դեռ ևս չէ որոշուած, բայց ենթադրում են որ 1500 ից աւելի չի լինի։ Զմոռանամ յիշելու որ այս տարի ևս մեր երիտասարդ արուեստագէտ երաժիշտ պարոն Աբսէն Եարամիշեանը իր խմբով մասնակցում էր երեկոյթին ձրիաբար և արժանացաւ հասարակութեան շնորհակալութեան։

*
* *

ՏՄԲԵԿԱՆ ՀԷԶՈՒԵՏԻՒԹԻՒՆ ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

—

Այսօր՝ փետրուարի 14-ին, Տեառնընդառաջի տօնին Ներսիսեան դպրոցի վարչութիւնը՝ հետեւելով դպրոցի աւանդական սովորութեանը, Վանաց Մայր եկեղեցում հոգեհանգիստ կատարեց ի յիշատակ Ներսէս V մեծադոյն Հայրապետի և ապա դպրոցում անցեալ $189^3/_4$ ուսումնական տարուայ տնտեսական և ուսումնական հաշիւը ներկայացրեց դահլիճում ժողովուած բաւականաչափ հասարակութեանը։ Հոգաբարձուներից երիտասարդ Թարմ ուժերն աւելորդ էին համարել հանդիսին ներկայ լինել՝ թերևս մոռացած լինելով, որ իրենք հոգաբարձու են։

Տնտեսական մասի հաշուետուութիւնից, որ կարդաց հոգաբարձու պ. Բուղդանեանը, ամբիոնն բարձրացաւ տեսչի պաշտօնակատար պ Պարգաթեկեանը և յայտնեց, որ ինքը պիտի «որքան կարելի է համառօտ կերպով ուսումնական մասի հաշիւը ներկայացնի»։

Պ Պարգաթէկեանը խօսում է ոչ Հայկական առոգանութեամբ և ոչ նոյն իսկ հայ լեզուով։ Հանդիսականը զարմանում և ծիծաղում էր լսելով այնպիսի գռեհիկ և տգէտ դարձուածներ՝ ինչպէս օր. «պ. Քարաժեանը Գերմանիայում է աւարտել դօքտորի տիտղոսում»։ Զատ նախադասութիւններ, նոյն իսկ պարբերութիւններ ոչինչ իմաստ չունէին, դատարկ հնչիւններ, բառեր էին։ Բայց այդ թողնենք։

«Համառօտ հաշուից առաջ» Ներսիսեան դպրոցի տեսչի պաշտօնակատարը մի երկար քան Պոլոնիուսի միրուքը յառաջաբան կարդաց, որ ունէր իւր յառաջաբանը, միջաբանը, բայց ոչ վերջաբանը։ Այդ ձեւ պարոնը հանդէս եկաւ ոչ իբրև մի պաշտօնական մարդ, որ նոյն ժամին կոչուած էր դպրոցի անցեալ ուսումնական տարուայ հաշիւը ներկայացնելու, այլ իբրև մի կուսակցական ագիտատոր։ Ահա նրա ճառի բովանդակութիւնը.

Մեր հոգևոր դպրոցների բարեփոխութիւնը ժամանակի հասունացած խնդիրներից մէկն է. այդ բարեփոխութիւնը պիտի կատարուի հասարակութեան լաւագոյն անդամների գործակցութեամբ։ Մի մարդ, որքան էլ մեծ ընդունակութիւնների տէր լինի, չի կարող ժամանակի պահանջած գործը կատարել. նա պէտք է դիմի ազգի լաւագոյն անդամների խորհրդին և քննութեանը։

Մեր դպրոցների ծրագիրն անպէտք է. պէտք է նոր ծրագիր։ Ծրագրի մէջ առաջին տեղը բնական գիտութիւնները պիտի բռնեն։ Այդ բանը հասկացել է և հասարակութիւնը, որ երևում է նրա՝ դպրոցին ցոյց տուած գիտակցական վերաբերմունքից։ Նոր հոգաբարձութիւնը կոչուած է հասարակութեան և ժամանակի պահանջը իրականացնել։ Եայլ մեկն նրա իրականացնի է. Նրանից է կախուած։

$189^3/_4$ ուս. տարուայ հաշուին գալով, պարոնը չյայտնեց, թէ ինչ մանկավարժական ժողովներ են եղել, կրթական և դաստիարակչական ինչ մտքեր, եղանակներ և միջոցներ են մշակուել, որպիսի հանդէսներ են կազմուել, աշակերտաց մտաւոր և բարոյական առաջադիմութեան համար ինչ միջոցներ են ձեռք առնուել, և այլն և այլն։ Բայց մի առանձին շեշտով յայտնեց, որ 71 աշակերտ դպրոցից հեռացել և արձակուել են, այլ թէ ինչու և որ ժամանակ, այդ չասեց։

Ապա ճառ կարդաց դպրոցի ուսուցիչ պ. Դաղբաշեանը, բացատրելով այն պարագաները, որոնց մէջ ծընունդ է առել Ներսիսեան դպրոցը։ Պարոնի ճառից մենք մի քանի նոր գիտեր իմացանք. նախ՝ որ ձկնիկները ծնւում են և ապա որ պղպատը ծանրութեան տակ թեքուելու՝ յետոյ ինքն իրեն ուղղւում է։ Պ Դաղ. էլ խօսեց դպրոցի ծրագրի մասին, յայտնեց, որ առաջին տեղը կլսենը, ազգային լեզուն ու պատմութիւնը պիտի բռնեն, որ նրանք, որոնք ուզում են բնական գիտութիւններին առաջին տեղը տալ, չեն հասկանում դպրոցի հիմնադրի նպատակը։

Պ. Եկմալեանի խումբը յաջող երգեց։

Արժանապատիւ Համազասպ վարդապետը՝ երևի ցանկանալով տեսչի պաշտօնակատարին մի հայրական խրատ տալ (կամ ինչպէս ժողովուրդն ասում է՝ ականջը քաշել) «պահպանիչ»-ից յետոյ ցանկութիւն յայտնեց, որ Տէրը եռանդ և ոյժ տայ նոր հոգաբարձութեան գործելու այնպէս, որպէս Նորին Վեհափառութեան ամենայն Հայոց Կաթողիկոսի կամքն է։

Յ. Ս.

*
* *

Կ. ՊՕԼՍԻ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՄԻ ԳՐՈՒԹԻՒՆ

—

Արժանապատիւ սիրելիդ մեր 'ի Քրիստոս

Ընկալայ հաճութեամբ սրտի դերբորդ գիրք Գիւանի Պատմութեան Հայոց զերկասիրեալն յարժանապատիւ սիրելութենէ Ձերմէ, ոյր վասն շնորհակալ ունիմ Ձեզ։

Գանեայ արդէն յանձին Ձերում զխաղացումն Աստուածային Սուրբ Հոգւոյն, որով զօրացեալ ձեռն 'ի գործ արկեալ է Ձեր յերկասիրութիւնն պիտանի և օգտակար։

Դուք, սիրելիդ մեր 'ի Քրիստոս, իբրև պաշտօնեայ առաքելական սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց ոչ միայն իբրև ճրագ լուսատու առատացեալ 'ի մարմին փրքու բանաւոր հօտիդ վաստակիք 'ի փրկութիւն հոգւոց ժողովրդեան 'ի Ցեառնէ Ձեզ յանձն եղելոյ, այլ և 'ի լուսաւորութիւն և 'ի քաղաքակիրթ յառաջադիմութիւն ազգիս, որոյ ապացոյց իմն է երկասիրութիւն Ձեր այդ ազգօգուտ։ Ուստի գովելով զաշխատասիրութիւն Ձեր յօգուտ Ս. Եկեղեցւոյ և Ազգիս՝ քաջալեր կարդամ Ձեզ յարատևել 'ի նոյն ջանս և 'ի վաստակս անձնուիրութեան առ 'ի լինել սատար լուսաւորութեան Հայորեղոյն։

Օրհնեմ զՁեզ Հայրական օրհնութեամբ, և Հայցեմ յերկնաւոր Քահանայապետէն՝ որ միայն պսակիչն է հաւատարիմ պաշտօնէից Եկեղեցւոյ իւրոյ սրբոյ, լցուսցէ զՁեզ ևս քան զևս շնորհօք Հոգւոյն սրբոյ և արժանի արասցէ կրկին պատուոյ երիցութեան, զոր պատրաստեալ է Տէրն մեր վասն այնոցիկ՝ որք փառաւորեն զանուն իւր ոչ բանիւ և եթ, այլ առաւելապէս գործովք օրինակ բարի հանդիսանան ժողովրդեանն։

Ողջունելով զՁեզ 'ի Քրիստոս Յիսուս

մնամ աղօթարար

Գ. Կ. ՄԱԹԷՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Արժանապատիւ

Տէր-Գիւտ քահանայ

ս. Եկեղեցւոյն Հայոց

'Ի Տփղիս։

*
* *

Շաբաթ, փետր. 11-ին, Թիֆլիզի Ժողովարանում կայացաւ «Կովկասի Բարեգործական» և «Հրատարակչական» ընկերութեանց մասնաւոր ժողովը։ Թէև մի ընդունուած ճշմարտութիւն է, որ մութիւնը ոյժ է կազմում, բայց այս անգամ «մութեան» հետևանքն այն էր, որ ընդամենը 1300 ռուբ. զուտ արդիւնք գոյացաւ։ Յաւելով պէտք է ասել, որ պարահանդէսը զուրկ էր կենդանութիւնից և չնայելով որ «բարեկենդան օրեր» էին, ամէնքն էլ «խելքն ու միտքը» աւելի մեծ չափով էին պահպանել քան թէ այդ պահանջվում է պարահանդէսական զուարճութեանց միջոցին։

*
* *

Փետրվարի 13-ին, երկուշաբթի երեկոյեան ժամը 9-ին, Թիֆլիզում սկսուեց մի ոչոչփէլէ փոխրէն, որ տևեց մինչև հետեւեալ առաւօտ. Փոթորիկն այնքան ասստիկ էր, որ քաղաքում շատ աւերածներ արաւ։ Բազմաթիւ տների կտուրներն ամբողջովին պոկուել են և ընկել, փայտեայ շատ տների պատուհանները փշրուած են, հեռագրական և տելեֆոնի թելերը կորտուած են, մի քանի խարխուլ տներ փլել են, բազմաթիւ ծառեր արմատներից պոկուել և վայր են գլորուել, մի կին վիրաւորուած է գլխից, վայր ընկած տախտակից։ Քամին ահագին կոտորած է արել ճնճղուկներից, Թիֆլիզի շատ այգիներում կոտորուած ճնճղուկները կոյտեր են կազմում։

Նոյն գիշերը հրդեհ սկսուեց Օլգինսկի փողոցի վերջին գտնուող մի երկյարկանի տան մէջ. ամբողջ տունն այրուել է և կանգուն են մնացել միայն խանձուած պատերը։

*
* *

Այսօր, փետր. 15-ին տեղի է ունենալու Կայսերական բժշկական ընկերութեան հերթական նիստը, ուր ի միջի այլոց բժշկապետ Ա. Բաբայեանը մի զեկուցում կը կարդայ ողնաշարի ժառանգական հիւանդութեան մասին։

*
* *

ՍԶՍՏՈՒԵՑԻՆԵՐ ՆԱԽՊՊԱՇԱՐՄՈՒՆՔՆԵՐԻՑ

—

Նախապաշարմունքը միշտ նախապաշարմունք է, նա միայն արտաքին ձևն է փոխում, իսկ նրա ներքին բովանդակութիւնը և արժէքը նոյնն է մնում։

Եթէ անկիրթ, տգէտ մարդը սարսում է կայծակի փայլակից, որոտմունքից, մենք նրան նախապաշարուած և սնոտիապաշտ ենք անուանում. իսկ չենք կարողանում նկատել, թէ ինչ շղթայող նախապաշարմունքներ են տիրում նոյն իսկ բարձրագոյն կրթութիւն ստացած մարդկանց շատերի վրայ, որոնց թիւը լեգիոն է։ Առաջին դէպքում եթէ նախապաշարմունքը տգիտութեանն է վերագրվում, երկրորդ դէպքում պիտի վերագրել ներքին բարոյական ոյժի, համոզմունքի և գիտակցութեան պակասութեան։ Իսկ այդ տեսակ դրութիւնն ահ-հատին թուլացնում է, չլատում է նրա գործունէութեան ընդունակութիւնը, դարձնում է նրան հասարակական կամ ճիշտն ասել կուսակցական խմբակներին գերի, դող է ձգում նրա համոզմունքներով չսնուած կազմուածքի մէջ, որ շարունակ կարօտ է այս կամ այն խմբակի պաշտպանութեան և ահա այդպիսով բազմաթիւ առանձին օրգանիզմներ, որոնք կարող էին ինքնուրոյն և կենսունակ լինել, ընկնում են ընդհանուր նախապաշարման բովի մէջ, լուծվում խառնվում են նրա մէջ (assimiler) և փոխանակ կեանքին նիւթ տալու, մահացող շրջաններն են մեծացնում։

Ակներև է որ եթէ մի փոքր ուշադրութեամբ դիտենք մեր ներքին կեանքը՝ կը տեսնենք որ նա նախապաշարմունքների մի բով է, որի մէջ անթիւ անհամար մտաւոր ստրուկներ զանազան ճամանութիւններ անելուց յետոյ հալվում են այդ բովի մէջ և խառնվում մեռած տարրերի հետ։

Բայց «ինտիլիգենտ» անուանուած շրջանում ինչպէս են ծնում և սնվում նախապաշարմունքները։ Մինթէ դպրոցները և համալսարանները նախապաշարմունք են հաղորդում մարդկանց, մինթէ գիտութիւնը նախապաշարմունք է։ Ո՛չ։ Բայց նայենք կեանքին և այն դերին՝ որ նոյն իսկ գիտութիւն ստացողները յանձն են առնում այդ կեանքում։

Ահա ձեզ մի հրապարակասոս, ոգևորուած գործունէութեան եռանդով, համոզուած մարդ, սկսում է իւր հրապարակական գործունէութիւնը, շօշափում է մոռացուած խնդիրներ, յուզում է նրանց, հետաքրքրում է հասարակութեանը, խրմբում է իւր չորս կողմը «ոյժեր», այսինքն անհատներ, որոնք իւրաքանչիւրն առանձին ինքնուրոյն ոյժեր են կազմում և ունին իրենց անկախ, առողջ համոզմունքները։

Սկսվում է հասարակական գործունէութիւնը հաւաքական ոյժերով։ Իդէան և իդէալը մէկ է, բայց տրամադրութիւնները, ընդունակութիւնները, ուղղղների կազմուածքները, հարցերի ձևակերպութեան ընդունակութիւնները տեմպերամենտը, տարբեր են. սակայն դա միայն նպաստում է գործի յառաջադիմութեան։ Բայց հրապարակասոսին թւում է թէ նրա փառքը նսեմանում է, նրան թւում է թէ փառքը բաժանվում է շատ թուով անձինքների մէջ, մինչդեռ ինքը՝ այլ հանգամանքներում, կարող էր ոչ թէ տասնաւոր այլ հազարաւոր մարդկանց փառքը կեդրոնացնել իրեն մէջ։ Եւ ահա նրա ամբողջ կազմուածքի ուշադրութիւն վրայ տիրում է այս սոսկալի նախապաշարմունքը՝ «ես պիտի հետաքրքրում համակրողների ոչ թէ որակութեամբ, այլ քանակութեամբ»։ Այդ վայրենի նախապաշարմունքը, որ հասարակական գործունէութեան ամենամեծ թշնամին է, այնքան խոր արմատ է ձգում այդպիսի հրապարակասոսի մէջ, որ նա մինչև անդամ հրապարակաւ արտայայտում է դրան իբրև մի սկզբունք, իբրև մի նշանաբան։

Պարզ է, որ ոչ մի իրեն յարգող անձնաւորութիւն, ոչ մի համոզուած անհատ չէ կարող իրեն կաշկանդել այդ սկզբունքով և իր ոյժերը նուիրել այդ սկզբունքի յաղթանակին, այլ նա եթէ չսկսի բացարձակապէս մրցել դրա դէմ, գոնէ կը հեռանայ այն շրջանից, ուր արտայայտվում է այդ սկզբունքը։ Հեռանալը ի հարկէ առաքինութիւն է, բայց բացասական, իսկ մրցելը՝ քաղաքացիական քաջութիւն, որ չէ տրուած ամեն անհատի։

Բայց այստեղ չէ վերջանում գործը, մանաւանդ այնպիսի ժողովրդի մէջ, ուր կայուն, անխախտ հասարակական կարծիք չկայ, ուր ինքնուրոյն անհատների թիւը տասնեակ է, իսկ ամբոխը բիւրաւոր։ Համակրողների քանակութեամբ նախապաշարուած հրապարակասոսը կամ հրապարակական գործիչը բթանում է մի այլ նոր աւելի զօրեղ նախապաշարմունքի ճնշման տակ.—«պէտք է ասածին հաւատարիմ լինել»։ Իսկ ասածն այն է թէ «համակրողների քանակութիւնն աւելի մեծ նշանակութիւն ունի, քան որակութիւնը»։

Ուրեմն սկսվում է նոր գործ, այն է ստուարացնել համակրողների թիւը։ Իսկ այդ նոր համակրողները կամ կուսակիցները երկու տեսակ կարող են լինել—ամբոխից, որի համակրո թիւնն ստանալու համար պիտի ստորանալ մինչև նրա մտքի և հասկացողութեան աստիճանը և ինտելիգենցիայի այն մասից, որ իր սեփական ներքին ոյժը չունենալով միևնոյն ժամանակ ունենալով բուն անձնական նպատակներ, կարիք է զգում մի ոյժի, որ իրեն պաշտպանի...

Եւ ահա կազմուեց ճահիճը, որի մէջ ամեն ընկնող առաջին օրից կը փտի և մտաւորապէս կը մեռնի, եթէ արդէն փտած և մեռած չէ։

Բայց չէ՞ որ ամենայն մի երևոյթ, լաւ թէ վատ, զարգանում է, առաջադիմում է այնպէս, ինչպէս զարգանում է առողջ կազմուածքը, զարգանում է կանոնաւոր միտքը և զարգանում է թոքախտը։ Նոյն իսկ չափազանցութիւն արած չենք լինի, եթէ համեմատենք համաճարակ հիւանդութիւնների հետ։ Մենք տեսնում ենք որ «համակրողների քանակութեան» կորստաբեր նախապաշարմունքը նոյնպէս զարգանում է և վերջի վերջոյ ստանում է ամենազզուելի կերպարանք։ Նա ստեղծում է մի ընդհանուր անգործութեան տրամադրութիւն, որովհետև մի գեղեցիկ օր երբ այդ սկզբունքի հեղինակը մեռնում է կամ չքանում է հրապարակից, նրա quasi հետևորդները իրենց մեռած են զգում, որովհետև իրենք կամաւ մեռցրել են իրենց մէջ ամեն մի ինքնուրոյնութիւն՝ անձնատուր լինելով մի անհատի կամ մի շրջանի նախապաշարմունքներին և քըմահաճութիւններին։ Բայց կեանքը պէտք է պահպանել, պէտք է գոյութիւնը շարունակել, պէտք է ապրել, ուրեմն ինչ անել։

Խնդիրն ինքն ըստ ինքեան հասարակ է և դիւրին վճռելի կամքի տէր մարդկանց համար.—Ազատուել նախապաշարմունքներից. բայց կաշկանդուած ուղեղն այդ հարցի առաջ իրեն զգում է Սցիլլայի և Քարիբդայի մէջ և մնում է նոյն նախապաշարմունքների ճահիճում։

Թշուառ և զզուելի դրութիւն։ Որտեղ պիտի փնտռի այդպիսի ինտելիգենտը համակրութիւն. իր սրտի մէջ. բայց այդ սիրտը վաճառուած է. գիտնական աշխարհում. բայց նա իրեն կորել է, բաժանել է այդ աշխարհից. ուրեմն առաջին հանդիպողը որ նրան կըհամաձայնի համակրող անուանել, կըհամաձայնի նրա հետ սակարկութիւն անել, նա նրա կուսակիցն է։ Ուրեմն նա թոյլ կըտայ որ անգրագէտ մանրավաճառը խօսէ Եւրոպայի քաղաքականութեան վրայ, գրականութեան վրայ, հայ հեղինակի վրայ և դատէ նրան, դատափետէ. նա թոյլ կըտայ և կըհաշտուի այն երեւոյթի հետ որ գողը, աւազակը, կաւատը (միջնորդը) դատաւոր լինի ժողովրդին իրենց կեանքը նուիրող հայրենեաց մշակների վրայ, նա թոյլ կըտայ որ անձնական փառասիրական ոտընձգութիւններ անող պաշտօնեաներն ան պատիժ գաւաճանեն հասարակական սրբազան սկզբունքներին, նա թոյլ կըտայ որ ամենասուրբ սկզբունքներն ընկնին, իրաւամբ նախատուած դասակիք անհատները հարստահարեն ամենասուրբ նպատակներ, որպէս զի նոր խաբէութիւնների նոր ասպարէզ ստեղծեն իրենց համար, նա թոյլ կըտայ որ ոստիկանական ծառայողը հայ գրագէտին մատնիչ անուանի և իւր բարերարին, իւր հոգևոր հօրը դաւաճանողը դաւաճանութեան մասին խօսի, և կրգտնուի տարիների ընթացքում պատրաստուած, նախապաշարումներով սնունդուած, նոյն իսկ առօրեայ կեանքին անտեղեակ, պատմութիւնից և գրականութիւնից բոլորիկ մի ամբողջ դասակարգ, որ երամական զգացմամբ վարակուած՝ այդ բոլորը տեսնելով թէ և հոգու մէջ խղճահարութիւն կըզգայ, բայց կըվախենայ ու կ'ամաչի ճշմարտութիւնն արտայայտելուց։

Դրա համար հարկաւոր չէ մարդ լինի, այլ ոչխար։

Ազատուեցէք նախապաշարմունքներից։

Ս. Հ-ՄԵԱՆՑ։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ ՍԱԼՄԱՍՏՈՒՄ

—

Հաֆթվան և Փայաջուկ գիւղերից միացած թատերասէրների խումբը, յօգուտ այդ գիւղերի դպրոցների, Հաֆթավնի օրիորդաց վարժարանի նորաշէն դահլիճում առաջին անգամ ներկայացրեց Դուրեանի «Սև հողեր» ողբերգութիւնը և «Սուտ ճգնաւոր» կատակերգութիւնը, որոնցից առաջինը վերածուած էր Արարատեան բարբառի, իսկ երկրորդը Սալմաստի գաւառաբարբառի ժողովրդեան աւելի մատչելի դարձնելու համար։

Առ հասարակ հասարակութիւնը շատ համակրանքով վերաբերուեց դէպի թատրոնը, այնպէս որ յատկապէս կանանց

համար ներկայացուած օրը, մենակ Հաֆթ-վանից ներկայ էին 80-ի չափ կանայք, իսկ հետևեալ օրը այր մարդոց համար ներկայացման ժամանակ բոլոր տոմսակները ծախուեցան։ Ընդարձակ դահլիճն ամբողջապէս լեցուած էր Հաֆթ-վանցի և շրջակայ գիւղերից հաւաքուած հասարակութիւնով. ներկայ էին նոյնպէս Միրզա-Աղա-խան սարթիպը (սարփարաստ) և Հայազգի Գաբրիէլ-խան սարհանկը։

Դերակատարներից իւրաքանչիւրը լաւ էր իւր դերում առանց բացառութեան, ընդհանրապէս ներկայացումն անցաւ շատ յաջող. հասարակութիւնը շատ գոհ սրտով հեռացաւ յայտնելով պ. Մ. Աւետիսեանին իւր ջերմ շնորհակալութիւնը, որի նախաձեռնութեամբ կազմուած էր խումբը։

Ներկայացման ամբողջ մուտքը եղաւ 48 թուման, որից 8 թումանի չափ ծախք էր եղել, իսկ մնացած լքառասուն թուման զուտ արդիւնքից 6 թուման յանձնուեցաւ Հաֆթվանի գրադարանին, իսկ 34 թումանը հաւասար բաժանուեցաւ երկու գիւղերի դպրոցներին։

Հասարակութեան համար շատ ցանկալի է որ երբեմն կրկնուին այդպիսի ներկայացումներ, բայց թատրոնական գրուածքների և այլ պիտոյքների պակասութեան պատճառով դժուարութիւն կայ ուստի շատ ուրախալի կը լինէր, եթէ Կովկասի մեր հայ եղբայրներից ձեռնհաս անձինք օգնէին մեզ այդ գործում։

Հաֆթվանցի։

1895 թ. 28 յունուարի
Հաֆթվան.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԳԼԻԱ.—Չնայելով որ այժմեան ազատամիտ կուսակցութեան արտաքին քաղաքականութիւնը հաճաձայն է ժողովրդի տրամադրութեան, այնուամենայնիւ հաւանական է նրա անկումը, որովհետև նրա ներքին քաղաքականութիւնը նոր այնպիսի ձգտումներ ունի, որ հակասում է անգլիական ազգի հասարակական կարծիքին։ Անգլացիք տրամադիր չեն Իրլանդիային տալ կատարեալ ինքնուրոյնութիւն, որին ձգտում է հասնել այժմեան կաբինետը։ Նրանք կը համաձայնեն տալ այդ ինքնուրոյնութիւնը այն պայմանով, որ Իրլանդիան չունենայ սեփական զօրք և դրամ։ Հաւանական է թւում որ այժմեան կաբինետը իր դիրքը պահպանելու համար և արտաքին քաղաքականութեան վնաս չհասցնելու համար կրգիջանի մեծամասնութեան տրամադրութեանը։

ՉԻՆԱՍՏԱՆ.—Լօնդօնի «Standard» լրագիրն ասում է թէ չինաց կայսրը կը համաձայնի խաղաղութեան դաշն կապել միայն այն ժամանակ, երբ ճափոնացիք կը մտնեն Պէկին։ Այն ժամանակ կայսրը կայսրուհի-մօր հետ կը տեղափոխուի Հալգան Մոնղոլիա։ Ճափոնացիների խաղաղութիւն հաստատելու պայմանները առաջուանից աւելի շատ տարբեր են այժմ։ Ճափոնիան այժմ մերժում է պետութիւններին հաղորդել իւր հաշտութեան պայմանները, բայց միևնոյն ժամանակ աշխատում է իմանալ թէ Չինաստանն ինչքան պատերազմական տուգանք կարող է վճարել և ինչ երկրներ կարող է զիջանել։

ԲՈԼՂԱՐԻԱ.—Սոֆիայից հեռագրում են թէ իշխան Ֆէրդինանդի դէմ մասնաւոր ինտրիգները սաստկանում են։ «Մօլոդայա Բոլղարիա» լրագիրը խորհուրդ է տալիս իշխան Ֆէրդինանդին կամ նորից ընտրուել կամ հրաժարուել։

«ԱՐԱՐԱՏԻ»
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Փետրվարի 11 ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — «Նով. Վրեմիա» լրագիրը լսել է, որ Բարձրագոյն Հրամանով կազմուած է մի յատուկ յանձնաժողով՝ քննելու համար այն նախագիծը, որ վերաբերում է «Կայսր Ալէքսանդր III-ի տուն» կարուցանելուն, կայսերական կալուածքներից մէկում, զառամեալ և հիւանդ գրականագէտներին, նկարիչներին և դերասաններին ապաստանելու համար։

Լրագիրները հաղորդում են, թէ յատուկ յանձնաժողովը, որ կանոններ է մշակում Բարձրագոյն Հրամանով որոշուած 50 հազար ռուբլուց գրողներին օժանդակութիւն հայցնելու, որոշեց տեղեկութիւններ հաւաքել պարբերական մամուլի գաւառական գործիչների մասին։

«Գիրժդ.» լրագիրը հաղորդում է, թէ ներկայ գարնան վճռուած է սկսել երկաթուղու գծի կառուցումը Թիֆլիզից մինչև Կարս, 282 վերստ տարածութեամբ և 23 միլիոն արժողութեամբ։

ՓԱՐԻԶ.—Անգլիական առևտրական պալատի ճաշին Փարիզում, անգլիական դեսպան լորդ Դիւֆէրին ասաց որ Անգլիայի և Ֆրանսիայի մէջ յարաբերութիւնները երբէք այնքան բարեկամական և խաղաղասէր չեն եղել, որքան ներկայումս։

ԲԵՐԼԻՆ.—Երեկ երեկոյ կայսրը զբաղաց ռուսաց դեսպանատուն, ողջունեց Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլայևիչին, և ապա նորին Կայսերական Բարձրութեան հետ միասին գնաց ամրոցը, ուր ընթիրք էր պատրաստուած։ Ժամը 11-ին Մեծ Իշխանը, հրաժեշտ տալով Նոցին Մեծութիւններին, ճանապարհ ընկաւ Պետերբուրգ։

ՎԻԵՆՆԱ.—Պատգամաւորների ժողովում, դաւաճանութեան վերաբերեալ յօդուածի առիթով սկսուած վիճաբանութիւնների ժամանակ, արդարադատութեան նախարարը յայտնեց, որ պետութիւնը պարտաւոր է պաշտպանութեան զօրեղ միջոցներ հեռք առնել ներքին և արտաքին թշնամիների դէմ։ Ապա ձեւակերպելով մեծութեանը վիրաւորելու վերաբերեալ յօդուածի խմբագրութիւնը, նախարարը ասաց թէ անհրաժեշտ են խիստ պատիժներ, որովհետև մի այնպիսի պետութեան վիճակը, որպիսին է Աւստրիան, սերտ կերպով կապուած է միապետի և դինաստիայի հետ։ Պատգամաւորների ժողովը վճռեց, որ օտար պետութիւնների պետերի դէմ եղած վիրաւորանքի համար մեղադրողներին պէտք է դատի ենթարկել դիպլոմատիական ներկայացուցիչների պահանջի համաձայն։

ՍՈՖԻԱ.— Փաստերով ապացուցուեց որ լրացուցիչ ընտրութիւնների ժամանակ բռնութիւններ են գործ դրուել։ Այդ հանգամանքը յուզում առաջացրեց կառավարութեան կողմնակիցների մէջ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Ուրբաթ, փետրվարի 10-ին, բաղդ ունեցան ներկայանալու Թագաւոր Կայսրին գիւղատնտեսական խորհրդի անդամները։

Երէկ ճանապարհ ընկաւ Վիեննա, էրցհերցոգ Ալբրէխտի թաղմանը ներկայ լինելու համար, Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչը։

Լրագրները հաղորդում են, որ հարաւ-արևելեան երկաթուղիների ակցիոներների ժողովը վճռեց միջնորդել թոյլ տալ իրեն երկաթուղիներ կառուցանել Ցարիցինից մինչև Հաշտարխան և Ելէցից մինչև Կուլիանով, և Վոլգայի գետաբերանը խորացնել Հաշտարխանի մօտ։

ՓԱՐԻԶ.—Ոստիկանութեան ստացած տեղեկութիւնների համեմատ, գաւառներից մեծ քանակութեամբ դինամիտ են գողացած և թաղցրած Փարիզի շրջակայքում։

Փետրվարի 12-ից.

ԲԵՐԼԻՆ.—Նախահաշուի յանձնաժողովը ընդունեց չորս կրէյսերներ և առաջին կարգի մէկ թնդանօթաձիգ նաւ կառուցանելու համար խնդրուած վարկը և մերժեց 2,300,000 մարկ վարկը երկրորդական թնդանօթաձիգ նաւերի համար։

Բրանդէնբուրգեան սէյմի տեղի ունեցած ճաշին կայսրն ասաց, որ այժմ մտքերը գլխաւորապէս զբաղուած են գիւղական հարցով, և ինքը, կայսրը, յոյս ունի, որ կ'աջողուի շատ օգտակար գործեր կատարել գիւղացիների համար, դրա համար գործ կը դրուեն ամեն ջանք։ Սակայն ինքը նախազգուշացնում է չափազանց յոյսերից, որոնք ցնորքների են հասնում։ Ազգաբնակութեան ոչ մի դասակարգ իրաւունք չունի պահանջել իւր համար առանձին արտօնութիւններ ի վնաս ուրիշ դասակարգերի։ Միապետը պէտք է կշռի բոլոր դասակարգերի շահերը և նպաստի մեծ հայրենիքի ընդհանուր բարօրութեանը։

ՎԻԵՆՆԱ.—Այսօր կայացաւ իշխանութեան կողմից թոյլ տրուած անգործ բանուորների ժողովը։ Գումարուած բանուորները փորձեր արին ցոյց անել, բայց երկու անգամ ոստիկանութիւնը ցրուեց նրանց։ Մի քանիսին կալանաւորեցին։

ԼՕՆԴՕՆ.—Լորդ Բոզբերին հիւանդացաւ ինֆլուենցայով։

ԲԵԼԳՐԱԴ.—Տաճիկ իշխանութիւնները, չնայելով յունաց միարօպոլիտ բողոքներին, հրամանագրեցին սերբական եկեղեցիներին Վիլէզէի շրջականներում յունական ծիսակատարութեամբ պատարագ մատուցանել, սլաւոնականի փոխարէն, որ թոյլ է տրուած միայն բուլղարական թեմի եկեղեցիների համար։

Կ. ՊՕԼԻՍ. — Տիեզերական նոր պատրիարքին ընդունեց սուլթանը, ապա տեղի ունեցաւ նրա գահակալութիւնը։

ԼՕՆԴՕՆ.—Տոկիոյից հաղորդում են թէ ճափոնական պատգամաւորների ժողովները վճռեցին 100 միլիոն իէնի նոր փոխառութիւն անել զինուորական ծախսերի համար։

ԹԻՖԼԻՍ.—Գեներալ Կուրոպատկինը տեղեկութիւն ստանալով մուշտէիդի՝ շիաների հոգևոր գլխի, մահուան մասին, խնդրեց յետաձգել տօնախմբութիւնը և որսը, որ նշանակուած էին արտակարգ դեսպանութեան թէհրան գալու առիթով։ Հոգևորականութեան ներկայացուցիչները թէհրանում, զգացուելով ժողովրդական վշտին ցոյց տուած ուշադրութիւնից, անձամբ յայտնեցին գեներալին իրանց երախտագիտութեան արտայայտութիւնը։

Փետրվարի 13-ից.

ԲԵՐԼԻՆ.—Վիլհէլմ կայսրը վաղը արտակարգ գնացքով ճանապարհ է ընկնում Վիեննա՝ ներկայ լինելու էրցհերցոգ Ալբրէխտի թաղմանը։

ԼՕՆԴՕՆ.—Լորդ Բոզբերին առողջանալու վրայ է։

Լօնդոնի տաճկական դեսպան Բուստէմ-փաշայի տեղ կը նշանակուի Կարաթէոդորի փաշան։

ԶԱՆԱԶԱՆ

Ռուսաց յայտնի քահանայ հայր Իսան Կրօնշտատսկու հրաշագործութեանց և մարգարէական ընդունակութեան լուրերը բազում ռուսներին խաղալիք են դարձրել զանազան „հանաքչիների„ ձեռքում։ Եթէ հաւատանք Բագուի „Կասպի“ լրագրին, բազումս լուր են տարածել իբր թէ հայր Իսան Կրօնշտատսկին հեռագիր է ուղարկել, որի մէջ նա ասում է, թէ „Աստուած արժանացրել է նրան մի տեսիլի“ և այդ տեսլեան մէջ նրան հրամայուած է տեղեկացնել Բագուի ռուսապատաններին, որ նրանք փութան, որքան կարելի է շուտով տաճառել իրենց կայքը և դուրս գնալ այդ քաղաքից, որովհետև Բագուի գլխին նոյն օրն է գալու, ինչ որ Սոդոմ-Գոմորի գլխին, այսինքն Բագուն գործանուելու է։ Այդ լուրը մեծ արագութեամբ տարածուել է քաղաքում, մանաւանդ հասարակ դասակարգի մէջ, որ ինչպէս երևում է արդէն շփոթութեան մէջ է։

Si non e vero e bene trovato.

Խմբագիր-Հրատարակիչ՝
ԱՐԴԱՐ ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուվկա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան սէիթիլիսի և վեներական հիւանդութիւնների։

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի ներքին և նեարդային հ.

Դ. Գ. ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժամը ներքին, երեխայոց և կանանց հ.

Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—11—12 ժ. կանանց հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍՈՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ.

Ա. Գ. ԴՈՒՐԿՈ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի ու սեռական օրգանների հ.

Ֆ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ա. Գ. ԴՈՒՐԿՈ քիմի-խոշորացուցական հեռազօտութիւն է անում մէզի, խիսի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցումը ընդունում են և ԳԻԵԶԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴԻՆԵՐ։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Նաւասարդեան

ԲԺՇԿԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱՐԱՆ
ԲԺՇԿ. ԴՈԿՏՕՐ
ԱԻԵՏԻՔ ԲԱԲԱՅԵԱՆԻ

Սօլոլակ, Սերգիևսկի փողոց № 14.

Բացի դեղերից գործադրվում են նաև զանազան տեսակ ՋՐԱԲՈՒԺԱԿԱՆ, ԵԼԵԿՏՐԱԲՈՒԺԱԿԱՆ և այլ ֆիզիքական սեթ օգներ։

ՆԵՐՔԻՆ և ՆԵՍԱՐԴԵԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ

ընդունվում են ամեն օր (բացի կիւրակի և տօն օրերից)

12½—1½ ժ. ցերեկը } կինարմատներ և երեխաներ
1½—2-ը ժ ցերեկը և 7-ին ժամ երեկոյեան } տղամարդիկ։

Ընդունարանում գտնվում են որոշեալ ժամերում մանկաբարձ — մասնաժանող կին և մասնաժիստ պարոն։

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

(Մուխրանեան փ., տ. Կուզանեանի, № 15. հիմնել են Թիֆլիզի քաղաքացիները երթևեկ հիւանդների համար 1866 թ. ապրիլի 4-ի յիշատակին)։

Հիւանդների ընդունելութիւն ամեն օր, բացի կիրակի օրերից, ձմեռն առաւօտեան ժամը 9—1, ամառը (յունիսի, յուլիսի և օգոստոսին) առաւ. ժամը 8—12.

Վ. Մ. Ուշերով — ներքին, երեխանց և ջղային հիւ. ժամը 10½—12 ամեն. օր։

Ե. Ա. Ղազանց—ներքին և երեխանց, ժ. 10½,—12 ամեն օր։

Գ. Գ. Գասլասեանց—խիրուրգ. և մէզի անդ. ժ. 12—1 ամեն օր։

Բժշկապետ Գ. Քոսաբեանց. սիֆիլիս և մէզի անդ. հիւանդ. 11—12 ամեն օր։

Մ. Ա. Մէրտէան—ներքին և վեներական, ժ. 12—1 ամեն օր բացի հինգշաբթի։

Բ. Մ. Զահվէրդեան - ներքին հիւանդութիւն. 12—1 ամեն օր։

Բ. Գէրալեն — ներքին և երեխանց հիւանդ. 12 1 ամեն օր։

Կին-բժ. Մ. Ա. Խաչատրեան—կանանց ժ. 9—11 ամեն օր։

Ն. Գ. Կասասեան — ներքին և երեխանց, ժամը 11—12 ամեն օր։

Կին-բժ. Լ. Եռ. Մելիքսետեան—կանանց, ժամը 11—12 ամեն օր։

Եռ. Ա. Ռոստոմ—ներքին, երեխանց և ատամի, ժամը 9—10 ամեն օր։

Մ. Ա. Ռեխերտենբ—ներքին և ջղային, ժամը 11—12 ամեն օր։

Գ. Ն. Սարգսեան—ներքին, մէզի անդ և վեներական, ժամը 12—1 ամեն օր։

Գ. Ա. Թարխանեան — ներքին և խիրուրգ., ժ. 12—1 ամեն օր։

Կին-բժ. Ս. Ա. Զէյրոյ—աչքի և կանանց, ժամը 12—1 ամեն օր։

Ատամնաբույժ Ա. Ս. Ուրբելի—ատամներ, ժամը 10—11 ամեն օր։

Կոնսուլտացիոն երեքշաբթի և ուրբաթ օրերը ժ. 12—1. Ծաղկի պատուաստումն—չորեքշաբթի և շաբաթ օրերը ժամը 9—1։

ՀԱՒԱՔԱՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

(Գալաթինակայա փ., տ. Տէրտէրեանի)

Մ. Ա. Քալանթարեան—ժամը 11—12 ամեն օր։

Կին-բժ. Մ. Ա. Խաչատրեան—կանանց, ժ. 11—12 երեքշաբթի և ուրբաթ օրերը։

ԽԱՐԲՈՒԵԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

(Բաննիա վօրսա, տ. Էնֆիաճեանի)

Գ. Բ. Տէր-Ղազարեան—ժամը 11—12 ամեն օր։

Կին-բժ. Մ. Ա. Խաչատրեան—կանանց, ժ. 11—1 երեքշաբթի և ուրբաթ օրերը։

Ծանօթութիւն.—Հարուստ անձերին բժշկական խորհուրդ և դեղեր տրուում են ձրի։

Քաղաքային բուժարանի կառավարիչ՝—
Դ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Ընդրկովկասեան երկաթուղի

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բաթում առաւօտեան 7 ժ. 30 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.։

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. և 12-ին 25 ր.։

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիզ հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

Ապրանքա-մարդատար գնացքը Թիֆլիզ Գանձակ դուրս է գնում երեկոյեան 7 ժ. 27 ր. հասնում է Գանձակ առաւօտեան 7 ժ. 40 րոպէին։

Ապրանքա-մարդատար գնացքը Գանձակից Թիֆլիզ դուրս է գալիս երեկոյեան 6 ժամին. հասնում է Թիֆլիզ առաւօտուայ 7 ժ. 35 րոպէին։

ՓՕՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹԻՒՆԸ
ՎՐՈՑ ՊՈՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մէլիքի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան ժամը 8-ին, գիշերում է Մէլիքի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետեւեալ օրը ժամի 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

ՌՈՍԱՍՏԱՆԻ ՕԴԵՆԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ամեն շաբաթ շոգենաւերի երթևեկութիւն

Բաթումի, Օդեսայի և Կ. Պօլսի միջև։

Բաթում-Ոչ դրուբ է գնում.

Շաբաթ օրերը (յոյս կիրակի գիշերուայ 3 ժ.) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրերը, 12 ժամին, ուղղ. ընթացքով. Նովորոսիսկի, Կերչի, Թեոդոսիայի, Եալտայի, Սեւաստապոլի և Սուխումի վրայով։

Երեքշաբթի օրերը լոյս չորեքշաբթի գիշերուայ 2 ժամին, ապրանքա մարդատար շոգենաւը բոլոր նաւահանգիստները։

Հինգշաբթի օրերը—լոյս հինգշաբթի գիշերուայ 3 ժամին, շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ յայտնում է ի գիտութիւն Ընկերութեան անդամների, որ փետրվարի 19-ին, կիւրակի, երեկոյեան ժամը 7-ին, Թիֆլիզի Դումայի դահլիճում նշանակուած է ընդհանուր ժողով, որի պարապմունքի առարկաները լինելու են.

1) Ընկերութեան 1895 թ. ընդհանուր, այն է, խորհրդի և ճիւղերի նախահաշուի քննութիւնը և հաստատութիւնը։

2) Պաշտօնատար անձանց ընտրութիւն, այն է՝ ա) խորհրդի 4 անդամների և 4 փոխ-անդամների, բ) ընդհանուր ժողովի նախագահի և քարտուղարի, գ) վերաստուգող յանձնաժողովի 3 անդամների և գրադարանական յանձնաժողովի 5 անդամների։

Խորհուրդը խնդրում է Ընկերութեան Թիֆլիզի անդամներից, վերանորոգել իրանց անդամակցութիւնը, դիմելով Ընկերութեան գրասենեակը Սէրգիէվսկայա փողոց տուն Ալիխանեանի № 16։ (3—1)

«ՆՈՐ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՎՐԱՑ»
ՎԷՊ Մ. ԽԱՏԻՍԵԱՆԻ
Դինն է 1 ռուբլի։

Ծախվում է կենդրոնական և խիղճկէկլի գրավաճառանոցներում։ Նոյն տեղերում ծախւում է և «Փեսայ որսողներ» վէպիկը։ Գաւառացի ցանկացողները կարող են դիմել կենդրոնական գրավաճառանոց։

(5—1)

ԾԵՐԱՄԻ ՅԻԼԼԻԻԼԵՐ ՍԵՐՄ
ՍՊԻՏԱԿ և ԴԵՂԻՆ ՏԵՍԱԿԻ
Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ և Կ. ԱՖՐԻԿԵԱՆԻ
ՇԵՐԱՄԱՏԱՆ

Մեզանից նախկին տարիների շերամի սերմ գնողներին յայտնում ենք, որ այլ ևս սերմ չի ուղարկուելու նրանց՝ առանց իրանց պահանջելու։ Դնել ցանկացողները թող բարեհաճեն դիմել հետևեալ հասցէներով.

Тифлисъ. 1) Кавказская шелководственная станція. 2) Императорское Кавк. Общ. Сельск. Хозайства. 3) Магазинъ Туміянца.
Лагодехи. Гренерное заведеніе И. Туміянцъ, К. Африкянцъ. въ имѣніи Туміянцы. (5—1)

ԼՈՅՌՅԻՂԻ ՀԱՅ ՃԵՄԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ վարչութիւնը, ընկերութեանս պարտք ունեցող անձերուն ժամանակին արդէն նամակով յայտնելէ յետոյ, այժմ վերստին հրապարակաւ կը յիշեցնէ, որ փութան իրենց պարտքերը ուղարկել, քանի որ վարչութիւնս ալ շուտով պէտք է, իւր տասնամեակի հաշիւը հասարակութեան տայ։

Վարչութեան նախագահ՝ Մ. Ոքէշեան։
(3—1) Քարտուղար՝ Մ. Յ. Շամամանեան։

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ ՄՈՍԿՎԱ

ՃԵՄԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՈՒՆԻ ՎԱՃԱՌԵԼՈՒ
ՄԱՐՏԻՐՈՍ ԷՄԻՆԻ

Հետևեալ սակաւաթիւ հեղինակութիւններն ու հրատարակութիւնները.

1) Վարդանայ Բարձրբերդցւոյ Պատմութիւն Տիեզերական, Մոսկվա, 1861 թ. 2 50
2) Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական. 1861 . . . . . 3 —
3) Մխիթարայ Այրեվանեցւոյ Պատմութ. Հայոց 1860 . . . . . 1 —
(Հիշեալ գրքերն՝ տարեալ գնոյ)
4) Всеобщая Исторія Вардана Великаго (XIII в.) переводъ съ армянскаго съ объясненіями и приложеніями 1861 . . . . . 4 —
5) Всеобщая Исторія Степаноса Таронскаго Асохика по прозванію (XI в.), пер. съ армянскаго съ объясненіями и прилож. 1864 . 4 —
6) Синодальное слово Нерсеса Ламбронскаго (XII в.) переводъ съ армянскаго, 1864 . . . . . 2 —
7) Шараканъ (Շարական) богослужебные каноны и пѣсны армянской Восточной Церкви. Польный переводъ. 1879 (մնացել է միայն մի քանի օրինակ) . . . . . 6 —
8) Армянскія надписи въ Карсѣ и Ани и въ окрестностяхъ послѣдняго, текстъ и переводъ, 1885 . . . . . 1 50
9) Нчеркъ Исторіи Армянской Восточной Церкви, 1864. . . . . —65
10) Очеркъ религіи языческихъ армянъ (изслѣдованіе) 1864. . . . . 1 50
11) Оввѣтъ на замѣчаніи г. Патканова, 1874 . . . . . —65
12) Моисей Хоренскій и древній эпосъ армянс. (изслѣдованіе) 1881 . 1 —
13) Династическій списокъ Хайкидовъ (изслѣдованіе) 1884 . . . . . —65
14) Сказаніе о Романѣ и Давидѣ (Борисѣи Елѣбѣ) по Арм. Четои-Минеямъ (пер. съ армянскаго) . . . . . —75
15) Сказаніи о Свв. Ѳаддеѣ и Варѳоломеѣ апостолахъ Арменіи (пер. съ армянскаго) . . . . . —75

Գրքերի ֆոստը հաշուած են ճանապարհածախսով հանդերձ։ — Այս գրքերից գնել ցանկացողները թող բարեհաճեն դիմել իրանց պատուէրներով Ճեմարանի կառավարութեան այսպիսի հասցէով.

Въ Правленіе Лазаревскаго Института восточныхъ языковъ (Москва)

Նոյն տեղում վաճառվում է նոր լոյս տեսած.

Исторія Арменіи Маисея Хоренскаго Новый переводъ Н. ЭМИНА съ армянскаго языка на русскій съ примечаніями и приложеніями, Москва. 1893 г. цѣна 2 р. съ пересылкою 2 р. 25 коп. 4—2

Дозволено цензурою Тифлист 14-го Февраля, 1895 года.
Տպարան Ց. Մարտիրոսեանցի
Типографія И. Мартиросіанца, на Орбел. ул., № 1—2